ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՆՐԱ ԴԵՐԸ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ (1870-1920 թթ.)

ՇՈՂԻԿ ՈՍԿԱՆԵԱՆ

ՄՈՒՏՔ

ԺԹ. դարի 70-80ականներին արեւելահայ իրականութեան մէջ նկատելի դրական տեղաշարժեր կատարուեցին մամուլի զարգացման գործում։ Այդպիսի առաջընթացն առաջին հերթին պայմանաւորուած էր ինչպէս հասարակական-քաղաքական իրադարձութիւններով, այնպէս էլ լրատուական մարմինների քաղաքական ուղղուածութեամբ, բովանդակային ու կառուցուածքային որոշակի փոփոխութիւններով։ Այդ տարիներին Թիֆլիսում հիմնադրուեց Մշակ (1872-1921) գրական եւ քաղաքական շաբաթաթերթը, որն ունէր ազատախոհ-բուրժուական ուղղուածութիւն։ 1872-1892 շաբաթաթերթը խմբագրել է հանրայայտ լրագրող եւ հրապարակախօս Գրիգոր Արծրունին (1845-1892)։ Մշակը ժամանակ առ ժամանակ խմբագրել են նաեւ Ալեքսանդր Քալանթարը (1855-1913), Համբարձում Առաքելեանը (1855-1918), Լեւոն Քալանթարը (1891-1959), Լէօն (1860-1932), Անդրէաս Արծրունին (1847-1898) եւ ուրիշներ։ Մշակին մինչեւ 1884 թղթակցել է նաեւ անուանի վիպասան Րաֆֆին (1835-1888), որն իր քննադատական եւ հրապարակախօսական յօդուածներով կատաղի պայքար է ծաւալել կղերապահպանողական մտայնութեան դէմ՝ պահանջելով առաջադիմական հիմքերի վրայ դնել լուսաւորութիւնն ու դպրոցը։

Գրեթէ նոյն տարիներին ազգային-պահպանողական գաղափարական ուղղութեան ներկայացուցիչ Արգար Յովհաննիսեանը (1849-1904) Թիֆլիսում հիմնադրեց երկու պարբերական՝ Փորձ (1876-1881) միամսեայ հանդէսը եւ Արժագանգ (1882-1898) գրական եւ քաղաքական շաբաթաթերթը, որոնք բացառիկ դեր խաղացին հայ նոր գրականութեան զարգացման գործում։ Այս պարբերականներին աշխատակցել են հանրաճանաչ գրողներ ու հասարակական գործիչներ Ռափայէլ Պատկանեանը (1830-1892), Պերճ Պռոշեանը (1837-1907), Քաջբերունին (Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեան, 1837-1920), Գաբրիէլ Սունդուկեանը (1825-1912), Ղազարոս Աղայեանը (1840-1911), Ալեքսանդր Երիցեանը (1841-1902), Նիկողայոս Տէր-Ղեւոնդեանը (1848-1920), Նիկողայոս Տէր-Յարութիւնեանը (Հարօն - Շ.Ո.), Գէորգ Եւանգուլեանը (1843-1901) եւ ուրիշներ։

Աւելի ուշ՝ 1889-1907ին, Թիֆլիսում Աւետիք Արասխանեանցի (1857-1912), այնուհետեւ՝ Փիլիպոս Վարդազարեանի (1858-1935) խմբագրութեամբ հրատարակուեց Մուրճ գրական, հասարակական եւ քաղաքական ամսագիրը։ Մուրճի շուրջ համախմբուած ազգային-պահպանողականներն էլ բոլորի նման քաջատեղեակ էին Արեւմտահայաստանում տեղի ունեցող իրադարձութիւններին եւ սերտ առնչութիւններ ունէին տեղի մտաւորականների եւ հասարակական-քաղաքական գործիչների հետ։ Նրանք մեծ յոյսեր էին փայփայում Արեւմտեան Հայաստանի ապագայի հանդէպ։ Նոյնիսկ նրանցից ոմանք հակուած էին պաշտպանելու այն կարծիքը, որ եթէ հայերին վիճակուած է մի օր ազատ շունչ առնել եւ դուրս գալ իրենց ծանր վիճակից, ապա այդ պէտք է լինի Արեւմտեան Հայաստանում։

ԺԹ. դարի վերջին քառորդում սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական իրադարձութիւնների թափանիւը նոր շրջան բացեց նաեւ արեւմտահայ, մասնաւորապէս, պոլսահայ մամուլի պատմութեան մէջ։ Չնայած թուրքական գրաքննութեան ծայրայեղ խստութիւններին՝ այնուամենայնիւ, արեւմտահայ մամուլն օրաւուր զգալի առաջընթաց էր ապրում։ Մինչ այդ գործող պարբերականներից բացի կեանքի էին կոչուել նոր թերթեր, որոնք թէ՛ իրենց բովանդակային ընդգրկումներով, թէ՛ ազգային հիմնահարցերի արծարծումով եւ թէ՛ հրապարակախօսական արուեստի ընդհանուր մակարդակով, մէկ քայլ առաջ էին նրանցից։

ԺԹ. դարի 70ականներին Թուրքիայում հրատարակւում էին մէկ տասնեակից աւելի պարբերականներ, որոնցից մէկը՝ Արեւելեան Մամուլը, խմբագրութեամբ Մատթէոս Մամուրեանի (1830-1901) լոյս է տեսել Զմիւռնիայում 1871ին եւ շարունակել է գործել մինչեւ 1909։ Հանդէսը մինչեւ 80ականների վերջերը բուրժուա-ժողովրդավարական դիրքերից լուսաբանում էր սոցիալ-քաղաքական եւ կրթական հրատապ խնդիրներ, սակայն յետագայում, երբ քաղաքական յետադիմութիւնը ուժեղ թափով մոլեգնում էր ինչպէս ցարական Ռուսաստանում այդպէս էլ սուլթանական Թուրքիայում, շատ մտաւորականների եւ պարբերականների նման, Արեւելեան Մամուլը աստիճանաբար կորցնելով երբեմնի յեղափոխական, մարտունակ ոգին՝ յայտնուեց ազատախոհութեան դիրքերում։

Հրատարակութեան հենց առաջին տարուանից Արեւելեան Մամուլի էջերը տրամադրւում են լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան հիմնահարցերի ըստ ամենայնի քննարկմանը։ Հանդէսում խորութեամբ լուսաբանւում էին Զմիւռնիայի Մեսրոպեան եւ Հռիփսիմեան վարժա-

բանների ուսումնադաստիարակչական աշխատանքները, քննարկում կրթութեան բովանդակութիւնը, ուսումնական յայտագրերին, ծրագրերին ու դասագրքերին ներկայացուող պահանջները, կարեւորում դրանց առջեւ դրուած խնդիրների նորովի լուծման անհրաժեշտութիւնը։ Թերթը բարձրացնում էր Զմիւռնիայում կրթական խորհուրդ ստեղծելու հարցը, որի բացակայութիւնը, բնականաբար, բացասաբար էր անդրադառնում վարժարանների կառավարման եւ ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպչական աշխատանքների վրայ։ Արեւելեան Մամուլում զգալի տեղ էր յատկացուած եւրոպական դպրոցների կառուցուածքի, առարկաների դասաւանդման դրուածքի, դաստիարակութեան համակարգի, կրթական ծրագրերի վերաբերեալ յօդուածներին։ Այսպէս՝ հանդէսի մի շարք համարներում տպագրուել են Յովհաննէս Իփեքճեանի «Գերմանական Մանկավարժութեան Կարեւորութիւնը»[2], «Կրթութիւն Ի Լոզան Եւ Մանկավարժական Հրահանգք»[3], Դելփեանի «Ենայի Համալսարան»[4] եւ այլ յօդուածներ։

Արեւելեան Մամուլում զգալի թիւ են կազմում եւրոպական ու ռուսական դասական մանկավարժներին ու նրանց ստեղծագործութիւններին նուիրուած յօդուածները, որոնց հիմնական նպատակը եւրոպական ու ռուսական մանկավարժական մտքի նուաճումները հայ մանկավարժներին հաղորդելն էր։ Արեւելեան Մամուլի էջերում տպագրւում են մանկավարժական բնոյթի յօդուածներ, որտեղ դիտարկուել են կանանց կրթութեան, դպրոցի դերի, լեզուի ուսուցման, ուսուցման տեսութեան, կրթութեան բովանդակութեան, ուսուցիչների պատրաստման համար վարժապետանոցներ ստեղծելու, ուսուցիչների բարոյահոգեբանական եւ նիւթական վիճակը բարելաւելու հիմնահարցերը։

Արեւելեան Մամուլը տպագրեց «Կրթութեան Խնդիրը Հայոց Մէջ» ծաւալուն յօդուածաշարը[5], որտեղ անանուն յօդուածագիրը, համեմատական զուգահեռներ անցկացնելով եւրոպական բարեկարգ վարժարանների եւ արեւմտահայ դպրոցների միջեւ, բացայայտում է ազգային կրթութեան թերութիւնները, միաժամանակ բարձրացնում դպրոցն արմատապէս վերափոխելու խնդիրը։ Արձանագրւում է, որ ազգային դաստիարակութեան գլխաւոր թերութիւններից մէկը դպրոցներում տարբեր առարկաների գծով որակեալ ուսուցիչների բացակայութիւնն է։ Հանդէսի էջերում տարիներ շարունակ դիտարկուել են ուսուցիչների քաղաքացիական որոշակի իրաւունքների ապահովման, նրանց բարոյական ու նիւթական վիճակի կայունացման, մասնագիտական պատրաստութեան հիմնահարցերը, որոնք դառնալով Արեւելեան Մամուլի

ծրագրային հիմնադրոյթներ, մնացել են նրա օրակարգում նաեւ յետագայ տարիներին։

Թուրքական գրաքննութիւնը, գրուանի տակ դնելով պոլսահայ մշակոյթը եւ իր ուշադրութիւնը սեւեռելով դրա վրայ, իր հսկողութիւնից դուրս էր թողել արեւմտահայ գաւառների մշակութային կեանքը, հետեւաբար՝ Արեւելեան Մամուլը բաց դուռ էր նաեւ ազգային որոշ հրատապ խնդիրներ առաջադրելու համար, մի հանգամանք, որով նա առանձնանում էր միւս պարբերականներից՝ վայելելով բազմահազար ընթերցողների բարոյական աջակցութիւնն ու ջերմ համակրանքը[6]*։ Եւ պատահական չէ, որ ժամանակի մամուլը եւ առաջադէմ մտաւորականութիւնը ըստ արժանւոյն են գնահատել հանդէսի եւ նրա բազմավաստակ խմբագրի տեղն ու դերը հայ լրագրութեան ու մամուլի պատմութեան զարգացման ասպարէզում։ Լուսաւորութեան ու կրթութեան այդ մեծ երախտաւորի մասին Արշակ Ալպոյաճեանը* (1879-1962) *գրում է.* «Մամուրեան իբրեւ գրագէտ անսովոր տիպար մը եղած է Թուրքիոյ հայոց մէջ, իբր գաղափարի ժիր մշակ մը եւ ազգային բազմահմուտ ու արդիւնաւոր գործիչ մը։ Այս բեղուն միտքը շարունակեց Տէտէեաններու սկսած գործը, ազգին ընծայելով բազմաթիւ ինքնագիր եւ թարգմանուած գործեր, որոնք մինչեւ հիմա չեն դադրած իրարու յաջորդող սերունդներու ընթերցանութեան առաջին գրքերը ըլլալէ...»[7]։ *Իսկ Գարեգին Զարբհանալեանն* (1827-1901) *նշում է.* «Եռանդով եւ հմտութեամբ լի թերթ մ'է Արեւելեան Մամուլ կոչուածը, զոր'ի[8] Զմիւռնիա կը հրատարակէ Մ. Մամուրեան, եւ որուն գրչի զգուշաւորութիւն եւ կարծեաց նուազ ազատականութիւն՝ առաւել փափաքելի եւ օգտակար պիտի ընէ իր թերթին շարունակութիւնը»[9]։ *Իր գնահատանքի մէջ չափաւոր, զուսպ եւ խստապահանջ Եղիա Տեմիրճիպաշեանն* (1851-1908) *այսպէս է գնահատել Արեւելեան Մամուլը՝* «Զմիւռնի մէջ ութ ամերէ ի վեր հրատարակուող այս պատուական Հանդէսին գրեթէ ամէն մէկ թերթին մէջ ազգային, գրական, իմաստասիրական, պատմական, քաղաքական, տնտեսական, կրթական եւ գրադատական ընտիր յօդուածներ կը տեսնուին, ոգիով, գաղափարներով, ոճով ու լեզուով ընտիր յօդուածներ, որոնք,- արդարեւ զարմանալի գլուխ եւ զարմանալի ձեռք,- որոնք ամէնն ալ նոյն գրչէն կ'ելնէին, որ ոչ այլ է, բայց նոյն ինքն Պ. Մատթէոս Մամուրեան...»[10]։

Այդ շրջանում օրաթերթը դարձաւ կեանքի հրամայականը։ Թիֆլիսում դեռեւս 50ականներից հրատարակւում էր ազգային-պահպանողական ուղղութիւնը ներկայացնող Մեղու Հայաստանի (1858-1886) *քաղաքական, բանասիրական եւ առեւտրական օրաթերթը՝ Սեդրակ Ման-*

դինեանի (1844-1915), այնուհետեւ Պետրոս Սիմէոնեանի (1830-1911) խմբագրութեամբ, իսկ 80ականներից Նոր Դար (1884-1916) քաղաքական-գրական օրաթերթը՝ Սպանդար Սպանդարեանի (1849-1922) խմբագրութեամբ։ Այս երկու օրաթերթերն էլ մշտապէս գաղափարական պայքարի մէջ էին Մշակի հետ։ Պոլսահայ պարբերականների շարքում Մասիս (1852-1908, հիմնադիր խմբագրապետ՝ Կարապետ Իւթիւճեան (1823-1904), Հայրենիք (1870-1896, 1909-1910, խմբագրապետ՝ Արփիար Արփիարեան (1851-1908), Արեւելք (1884-1912, խմբագրապետ՝ Բիւզանդ Քէչեան (1859-1927), ապա՝ Զարեհ Եուսուֆեան (1870-1940) եւ Բիւզանդիոն (1896-1918, հիմնադիր խմբագրապետ՝ Բիւզանդ Քէչեան) օրաթերթերն առանձնանում էին ոչ միայն իրենց երկարակեցութեամբ, այլեւ նշանաւոր էին մեծ պահանջարկով եւ ընթերցողների լայն շրջանում ունեցած բարձր հեղինակութեամբ։ Հետաքրքրութեան արժանի է այն փաստը, որ սկզբնական շրջանում Մասիս եւ Հայրենիք օրաթերթերը գտնուել են ազգային-պահպանողական դիրքերում, սակայն յետագայում Արփիար Արփիարեանի, Գրիգոր Զօհրապի (1861-1915), Լեւոն Բաշալեանի (1868-1943) եւ առաջադէմ միւս գործիչների գաղափարական ազդեցութեան շնորհիւ ստացել են ժողովրդավարական ուղղուածութիւն՝ դառնալով հզօր կամուրջ հայ-ռուսական կապերի ստեղծման համար։ Դրա ցայտուն օրինակը Արեւելքն է, որի հիմնադրումով աւելի գործնական ու կանոնաւոր յարաբերութիւններ հաստատուեցին հայ ժողովրդի երկու հատուածների միջեւ[11]։ Այդ մասին Հրանտ Ասատուրը (1862-1928) գրում է. «Նորահաստատ կապերը հզօրապէս պիտի ազդէին ազգային կեանքին եւ Պոլսոյ օրագրութեան վրայ։ Ազգային ամէն խնդիր թէ «Մշակի» եւ թէ «Արեւելքի» մէջ գաղափարներու կատարեալ համերաշխութեամբ կը քննուէին։ Զգացումներու եւ մտածողութիւններու համանմանութիւնը երեւան կու գայ հանրային եւ ուրիշ գործերու մէջ ալ»[12]։

ԱՐԵՒԵԼՔ

Մանկավարժութեան նկատմամբ հետաքրքրութիւնն Արեւելքում ակնյայտ էր նրա հիմնադրման առաջին իսկ օրերից։ Դպրոցին եւ կրթական գործին նուիրուած յօդուածների թիւը տարէցտարի աճում էր, որը բնականաբար, բարձրացնում էր Արեւելքի պահանջարկը եւ հեղինակութիւնը նաեւ մանկավարժական լայն հասարակայնութեան շրջանում[13]։ Օրաթերթը մանրակրկիտ տեղեկութիւններ էր հաղորդում Արեւմտահայաստանի եւ Թուրքիայի հայաշատ կենտրոններում գործող ազգային դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանք-

ների, կրթութեան բովանդակութեան, գիտութեան տարբեր ճիւղերի հիմունքների ուսուցման եւ առարկաների դասաւանդման դրուածքի մասին։ Օրաթերթը բարձրացնում էր ուսուցման բովանդակութիւնը բնագիտամաթեմատիկական առարկաներով համալրելու պահանջը, առաջ էր քաշում ուսուցման սկզբունքներն ու մեթոդներն արմատապէս բարեփոխելու հիմնահարցը, առաջարկում էր ժամանակի պահանջներին համապատասխան դասագրքեր ստեղծելու համար կազմակերպել մրցութային յանձնախմբեր, լուրջ քննարկման նիւթ էին դարձել դպրոցական ընթացիկ եւ տարեվերջեան քննութիւնները եւն. (տես՝ 1884ի թիւ 162, 222, եւ 1885ի թիւ 358, եւն.)։

Արեւելքը հրատարակում էր նաեւ անուանի մտաւորականների եւ հասարակական գործիչների կեանքին ու գործունէութեանը նուիրուած յօդուածներ[14]։ Արեւելքը յաջորդական համարներով հրատարակել է «Ֆրէօպէլ Եւ Իր Դրութիւնը» յօդուածաշարը[15], որտեղ հանգամանօրէն լուսաբանւում են Ֆրեդերիկ Ֆրէօբէլի մանկավարժական հայեացքները։ Ֆրէօբէլի պաշտպանած հիմնադրոյթներից մէկը կանանց կրթութեան հարցն էր։ Ֆրէօբէլն այն կարծիքին էր, որ երեխաներին կրթելու համար պէտք են կրթուած մայրեր, առանց որոնց նոյնիսկ մանկավարժական լաւագոյն ու կատարեալ համակարգերը միշտ կը մնան անիրագործելի։ Ֆրէօբէլը կնոջ դաստիարակութեան մէջ էր տեսնում հասարակութեան առողջացման ելքը։ Եթէ Պեստալոցցին (1746-1827), կարծում էր, որ «Ժողովրդի ապագան մայրերի ձեռքի մէջ է» ապա Ֆրէօբէլն աւելացնում էր. «Վերափոխենք կնոջը եւ դրանով կը վերափոխենք ընտանիքը, ընտանիքը վերափոխենք, դրանով պիտի վերափոխենք դպրոցը եւ հասարակութիւնը»[16]։

Արեւելքի էջերում խորութեամբ քննարկւում էր նաեւ գաւառահայութեան կեանքը։ Օրաթերթի կրթական բաժնում լուսաբանւում էին գաւառի դպրոցը եւ կրթական կեանքն իր տարաբնոյթ հիմնահարցերով։ Դեռեւս 70ականներին Սմբատեան Ընկերութիւնը Խարբերդում բացել էր իր վարժարանը, որը կենտրոնական վարժարանի դեր էր կատարում գաւառի գիւղերի համար։ 80ականներին դպրոցին կից գործում էր նաեւ ծաղկոց-մանկապարտէզը։ Սակայն դպրոցը գտնւում էր ծայրաստիճան անմխիթար վիճակում. դպրոցի շէնքը ենթակայ էր քանդման, աշակերտների թիւը 60ից չէր անցնում, ուսուցիչները գրեթէ չէին վարձատրւում, դպրոցը չունէր գրագէտ ուսուցիչներ, չկային նաեւ համապատասխան դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, գրենական պիտոյքներ եւն.։ Ահա թէ ինչու ծնողները նախընտրում էին իրենց երեխաներին ուղարկել Խարբերդի ամերիկեան միսիոնէրների

հիմնած Եփրատ Քոլէջը (գործել է 1876-1915), որը բարեկարգ դպրոց էր, սակայն հայ մանուկներին տալիս էր օտար դաւանաբանական կրթութիւն։ Արեւելքը 1885ի ապրիլեան համարներում ահազանգեց այդ մասին եւ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռեց այդ երեւոյթի վրայ։ Հաշուի առնելով Սմբատեան Ընկերութեան նիւթական սուղ պայմանները՝ Սրբազան առաջնորդը վճարեց ուսուցիչների ամսավարձը՝ խոստանալով տարեկան մէկ-մէկ ամսավճար տալ այսպէս եւ կոչ արեց հարուստ ազգայիններին հոգալ վարժարանի ծախսերը[17]։

Իրրեւ թերթօն Արեւելքի համարներում տպագրուեցին Բաֆֆու Խաչագողի Ցիշատակարանը[18] եւ այլ գործեր։ Օրաթերթի գիտական բաժնում տպագրւում էին մանկավարժա-հոգեբանական բնոյթի ուշագրաւ յօդուածներ։ Այսպէս՝ թիւ 162ում (1884) տպագրուել է Յովսէփ Եուսուֆեանի (1855-1913) «Իրագիտութեան Ուսումը Վարժարանաց Մէջ» յօդուածը։ Ուշադրութեան է արժանի նաեւ Յ. Եուսուֆեանի «Հոգեբանական Խորհրդածութիւններ» շարքը, որտեղ արւում են կենդանի վիճակից մահուան վիճակին անցնելու գիտական մեկնաբանութիւններ։ Արեւելքը թարմ ու առատ լուրերից բացի կանոնաւոր ձեւով հրապարակում է եւրոպական հանրայայտ թերթերից թարգմանուած եւ լաւ խմբագրուած քաղուածքներ, ազգային-քաղաքական լուրջ տեսութիւններ, գրական, գիտական, կրօնական յօդուածներ ու թղթակցութիւններ[19]։

Ժամանակի մամուլը եւ առաջադէմ գործիչները Արեւելքի գործունէութիւնը գնահատել են ըստ արժանւոյն։ Այսպէս՝ Գրական Եւ Իմաստասիրական Շարժումը գրում է, որ Արեւելքը հայկական թերթերից ամենալաւագոյնն էր եւ շատ կողմերով բարձր էր նաեւ Պոլսում հրատարակուող եւրոպական օրաթերթերից։

Նոյնը կարելի է ասել նաեւ Արփիարեանի եւ Բաշալեանի խմբագրութեամբ հրատարակուող Հայրենիք եւ Քեչեանի խմբագրած Բիւզանդիոն օրաթերթերի մասին, որտեղ քաղաքական ու ազգային հիմնահարցերին զուգահեռ տպագրւում էին նաեւ կրթութեան հարցերի մասին ուշագրաւ յօդուածներ, մանկավարժական տեսական քննարկումներ ու դպրոցական տեղեկատուութիւններ։

ԿՐԹԱԼՈՒՍԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ռուս-թուրքական պատերազմի տարիներին (1877-1878) պարբերական մամուլի ծրագրային հիմնախնդիրներից մէկը Հայկական Հարցն էր, երբ ամբողջ խորութեամբ քննարկւում էր արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական իրավիճակը։ Այս հիմ-

նախնդիրը մշտապէս դարձաւ ինչպէս արեւելահայ, այնպէս էլ արեւմտահայ առաջադէմ պարբերականների օրակարգային քննարկման նիւթ։ Թէ՛ արեւելահայ, թէ՛ արեւմտահայ պարբերականները մեծ ուշադրութիւն են յատկացրել նաեւ ազգային մշակոյթի հարցերին՝ նոր թափ հաղորդելով գրականութեան, երաժշտութեան, թատրոնի, դպրոցական ցանցի զարգացմանն ու ծաւալմանը։

ԺԹ. դարի 80ականներին զարգացման նոր փուլ մտաւ կրթալուսաւորական շարժումը։ Այն գլխաւորում էր 60ականների սերունդին փոխարինած եւ մասնագիտական կրթութիւնը տեղի եւ եւրոպական երկրների բարձրագոյն կրթօջախներում ստացած մտաւորականների մի նոր սերունդ՝ Մամուրեան, Գրիգոր Օտեան (1834-1887), Մկրտիչ Պեշիկթաշլեան (1828-1868), Ռեթէոս Պէրպէրեան (1848-1907), Տեմիրճիպաշեան, Մինաս Չերազ (1852-1919), Զօհրապ, Յովհաննէս Հինդլեան (1866-1950), Ասատուր, Լեւոն Շանթ (1869-1951), Արշակ Զօպանեան (1872-1954), եւ շատ ուրիշներ։ Այդ շարժման մասին Ասատուրը գրում է. «Բնազանցասէր գրողներու սերունդը հետզհետէ տեղի կուտայ գրական լուրջ ձգտումներով տոգորուած նորերուն եւ նորագոյններուն»[20]։ Առաջադիմական ժողովրդավարական գաղափարներով զինուած մանկավարժները պաշտպանում էին ռէալական կրթութեան գաղափարը եւ հանդէս գալիս դպրոցը արմատապէս վերափոխելու պահանջներով։ Նրանք քննադատում էին ուսուցման միջնադարեան մեթոդները՝ փոխարէնը առաջարկելով ուսուցման բովանդակութիւնը համալրել այնպիսի առարկաներով, որոնք սովորողներին կը գինեն բնութեան եւ հասարակութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքներով։ Դաստիարակութեան արդիական գաղափարների պաշտպանութեամբ նրանք հանդէս էին գալիս ոչ միայն մանկավարժական մամուլում, այլեւ բոլոր տիպի պարբերականներում եւ հրապարակումներում։

Հայ մանկավարժական մամուլի առաջին մունետիկը դարձաւ 1864ին Թիֆլիսում Խորէն Ստեփանէի (1840-1900) հիմնադրած Հայկական Աշխարհը, որը հանգամանքների բերումով, Թիֆլիսից բացի (1864-1871) հրատարակուել է նաեւ Գանձակում եւ Շուշիում (1874-1875), Բաքւում եւ Երեւանում (1877-1879)։ Հայ մանկավարժական մամուլի պատմութեան մէջ իրենց առանձնայատուկ տեղն ունեն Վահան Բաստամեանցի (1835-1881) Դպրոց (1874-1876, Վաղարշապատ), Յակոբ Տէր-Յովհաննիսեանի Մանկավարժական Թերթ (1878-1879, Թիֆլիս), Իսահակ Յարութիւնեանի (1863-1928) Նոր Դպրոց (1908-1913, Թիֆլիս) ամսագրերը եւ 1892ին Մոսկուայում հրատարակուած Մանկավարժական Գրադարան տարեգիրը։

Տասնամեակներ շարունակ ազգային թերթերը դարձել էին ոչ միայն հայ մտաւորականների գաղափարների արձանագրման տոմարներ, այլեւ այդ գաղափարների տարածման ակունքներ. գաղափարներ, որոնք աստիճանաբար անցնում էին հայրերից որդիներին, աւագ սերնդից՝ կրտսերին։

Հայ մտաւորականների ջանքերի շնորհիւ աճում էր առաջադիմական գաղափարներով առլեցուն, նորովի մտածող մի նոր սերունդ։

Պատահական չէր, որ ԺԹ. դարի առաջին տասնամեակներին հասարակական-ժողովրդավարական շարժումների ազդեցութեան տակ Անդրկովկասում եւ այլուր կազմակերպուեցին աշակերտական-ուսանողական գաղտնի խմբակներ, որտեղ քննարկւում էին նաեւ ազգային-քաղաքական հարցեր։ Լազարեան Ճեմարանի Արեւելեան Լեզուների Ֆակուլտետի ուսանողների նախաձեռնութեամբ 1908ին լոյս ընծայուեց *Ուսանող* պարբերականը, որի նշանաբանն էր՝ «Քննիլ, Դատիլ, Ստեղծիլ», Գէորգեան Ճեմարանի սաները հրատարակեցին ձեռագիր-խմորատիպ *Կողով* (1910), *Նոր Փարոս* (1912), *Երաժշտութիւն* (1914) թերթերը[21], Շուշիի թեմական դպրոցի աշակերտների նախաձեռնութեամբ 1913ին կազմակերպուեց *Աշակերտ* խմորատիպ գրական-գեղարուեստական շաբաթաթերթը։ Այս թերթերը տեղեկացնում էին սովորողների ուսման մէջ ունեցած առաջադիմութեան, նրանց նախասիրութիւնների եւ հետաքրքրութիւնների մասին։ Թերթերում ծանրակշիռ տեղ էր յատկացւում սովորողների գեղարուեստական ստեղծագործութիւններին, որոնք խօսում էին ճեմարանականների բազմակողմանի գիտելիքների եւ գեղագիտական բարձր ճաշակի մասին։ Հարկ է նշել, որ խմորատիպ ձեռագիր մամուլի առկայութիւնը կարեւոր էջ է արեւելահայ մամուլի պատմագրութեան մէջ, որը քիչ թէ շատ պատկերացում է տալիս դարասկզբի առաջին տասնամեակներին հայ դպրոցի աշակերտական կեանքի, դպրոցների ուսումնադաստիարակչական աշխատանքների, կրթութեան բովանդակութեան, ուսուցման մակարդակի եւ այլ հարցերի մասին։ Սխալուած չենք լինի, եթէ ասենք, որ այն հանդիսացաւ ազգային մանկապատանեկան մամուլի նախատիպը, որի հիմքի վրայ յետագայում ստեղծուեցին մանկավարժական մամուլի նոր, աւելի կատարեալ տեսակներ՝ *Հասկերը*, *Փնջիկը*, *Պատանին* եւ այլ պարբերականներ։

Մասնագիտական մամուլի առաջընթաց նկատւում էր նաեւ արեւմտահայ կեանքում. այստեղ մէկը միւսի յետեւից լոյս էին տեսնում մարզական, երաժշտական, թատերական, գրական-գեղարուեստական ուղղուածութիւն ունեցող պարբերականներ։ Այդ շրջանում լայն թափ

ստացաւ նաեւ մանկավարժական մամուլը։ Լոյս տեսան՝ *Մանկավարժ* (1870-1880, Պոլիս), *Երկրագունդ* (1870-1871, Պոլիս), *Աւետարեր Տղայոց Հայաստանի* (1872-1915, Պոլիս), *Թատրոն Բարեկամ Մանկանց* (1876-1878, Պոլիս), *Բուրաստան Մանկանց* (1882-1889, Պոլիս), *Լեզու* (1887-1888, Պոլիս), *Կրթարան* (1888-1889, Պոլիս), *Մաղիկ Մանկանց* (1889-1893, Պոլիս), *Վտակ* (1907, Վան, խմորատիպ), *Դպրոց-Դաստիարակ* (1909, Նորաշէն, (Մուշ), խմորատիպ), *Հայ Ուսանող* (1910-1911, Պոլիս), *Շող* (1910-1913, Պոլիս), *Կրթասիրաց* (1910-1914, Մալաթիա), *Ուսումնարան* (1911-1915, Պոլիս), *Հայ Դպրոց* (1914, Պոլիս) եւ այլ պարբերականներ։

Քանի որ, հասկանալի պատճառով, հնարաւոր չէ վերոնշեալ բոլոր պարբերականները լուսաբանել առանձին-առանձին, ուստի չթերագնահատելով դրանց կրթադաստիարակչական դերն ու նշանակութիւնը՝ հիմնականում կ՝անդրադառնանք այն թերթերին ու հանդէսներին, որոնք իրենց մանկավարժական ուղղուածութեամբ, ներքին դրսեւորումներով ու ծաւալումներով, կրթութեան հիմնահարցերի լուսաբանման խորութեամբ եւ ուսումնադաստիարակչական արուեստի ընդհանուր մակարդակով առաւել աչքի ընկնող դեր են խաղացել մատաղ սերնդի դաստիարակութեան գործում։

ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

Դեռեւս ԺԹ. դարի 60ականներին Կարապետ Շահնազարեանը (1814-1865) Մանչեստրում հիմնադրեց տպարան եւ 1864-1865ին հրատարակեց *Երկրագունդը*, որը նրա մահից յետոյ Ներսէս եպիսկոպոս Վարժապետեանի (1837-1884) ջանքերով տեղափոխուեց Պոլիս։ Նուպար-Շահնազարեան վարժարանի[22] սաները, յաւերժացնելով իրենց բարերարի յիշատակը, 1870ին կազմակերպեցին *Երկրագունդի* վերահրատարակման գործը, որի տնօրէն-հրատարակիչներն էին Յովհաննէս Իփեքճեանը եւ Ս. Միքայէլեանը, իսկ խմբագիրը՝ Ջերազը[23]։ Հարկ է նշել, որ մինչ այդ հրատարակուած աշակերտական-ուսանողական պարբերականների շարքում *Երկրագունդը* բնութեան ու հասարակութեան վերաբերեալ անհրաժեշտ գիտելիքների տարածման եւ հրապարակախօսական ինքնատիպ ճաշակով ունէր զգալի առաւելութիւններ։ Դրանում, անշուշտ, մեծ էր պատանի Ջերազի՝ ապագայ հրապարակախօսի ու գրաքննադատի դերը։

Իր խմբագրութիւններում Ջերազը լուսաւորական-ժողովրդավարական դիրքերից համարձակ քննադատում եւ խարազանում էր ազգային կեանքում տեղ գտած արատաւոր երեւոյթները, որոնք կասեցնում էին ազգային առաջընթացը։ Ջերազը կարեւոր տեղ էր յատկացնում հայ

եւ եւրոպական դասականների ստեղծագործութիւններին։ Նա բարձր էր գնահատում Վիկտոր Հիւգոյին (1802-1885), որի գրիչը համարում էր «սուր մը ազատութեան», իսկ լեհ բանաստեղծ Ադամ Միցկեւիչի ստեղծագործութիւնների մասին խօսելիս ափսոսանք էր յայտնում, որ այդ տաղանդաշատ բանաստեղծի ստեղծագործութիւններն անյայտ են հայ ժողովրդին՝ միաժամանակ յուսադրելով, որ Երկրագունդը կը ծառայի այդ վեհ նպատակին եւ թերեւս «օր մը կարենայ ծանօթացնէ զանի»[24]։ Նա բարձր կարծիք ունէր եւ մեծ համակրանքով էր խօսում նաեւ Փարիզում հրատարակուող Արեւելք եւ Արեւմուտք պարբերականների խմբագիր Ստեփան Ոսկանի (1825-1901) մասին. «Հայ է խմբագիրը, եւ սքանչելի ոճ մ'ունի ֆրանսերէն։ Պ. Ստեփան Ոսկան, որոյ անցեալն անծանօթ է ինձ, օտարաց օգուտ եւ ազգայնոց պատիւ կը բերէ այն ընտիր յօդուածներով, յ'որս լիաբուռն ցանուած են լուսաւոր ու ազատ գաղափարներ. եւ որ աւելին է, շրջահայեաց լեզու մը կը գործածէ»[25]։

Մեծ է Երկրագունդի դերը յատկապէս մանուկներին հայրենասիրութեան, ազգասիրութեան ու մարդասիրութեան ոգով դաստիարակելու գործում։ Այդ նպատակով թերթի տարբեր համարներում տպագրուել են եւրոպական գրականութիւնից եւ հայոց պատմութիւնից ընտիր հատուածներ, ազգագրական պոէմներ, բարոյախօսական թեմաներով գրոյցներ եւ մանրապատումներ։ Թերթի «Գրականական» բաժնի տարբեր համարներում տպագրուել են Ռ. Պատկանեանի «Քաջ Վարդան Մամիկոնեանի Մահը» պոէմը, ինչպէս նաեւ «Մշակ» եւ «Գանգատ» բանաստեղծութիւնները։

Ի շարս այլ հարցերի Երկրագունդը հետեւողականօրէն արծարծում էր նաեւ հայ ժողովրդի երկու հատուածների, ինչպէս նաեւ հայ-ռուսական գրական ու մանկավարժական կապերի ամրապնդման կարեւոր խնդիրները, մի հանգամանք, որը գնալով աւելի էր կարեւորւում եւ ազգային միաբանութեան ձեւաւորման ճանապարհին ձեռք բերում մշակութային նորանոր արժէքներ։ Այս տեսակէտից շաբաթաթերթը լայն ժողովրդականութիւն էր վայելում ոչ միայն մանուկների ու պատանիների, այլեւ մեծահասակ ընթերցողների շրջանում։ Գրիգոր Օտեանը, որը Երկրագունդի մշտական բաժանորդներից էր եւ աչալուրջ հետեւում նրա բոլոր համարներին, գրում է. «...Երկրագունտին պէս թերթ մը, թէ եւ մանուկներէ խմբագրեալ, կու գայ յիշեցնել...ուր ուրեմն՝ թէ մենք ալ ունինք դեռ հայերէն լեզու մը, եւ այդ լեզուով կրնան եղեր գրուիլ լուրջ ու զգօն յօդուածներ...»[26]։

Շարաթաթերթում առանձին բաժին է յատկացուել նաեւ թարգմանական գործին։ Թարգմանութիւնների նկատմամբ դրսեւորւում էր մեծ զգուշաւորութիւն եւ բարձր ընտրողականութիւն, քանի որ կան գործեր, որոնք «վնասակար են ազգին ներկայ դրից նկատմամբ, ու աղիտաբեր ազդեցութիւն կ'ունենան», կան գործեր, որոնք դեռեւս ժամանակավրէպ են ժողովրդի համար «ու անկէ չ'են կրնար ընդունելութիւն գտնել»[27]։ Այս դէպքում կարեւորւում էր թարգմանչի դերը, նրա դիտունակութիւնը, զգօնութիւնը, խորագիտութիւնը, թարգմանչական արուեստի կուլտուրան, գրական ճաշակը։ Օտար գրական նմոյշներից նա պէտք է ընտրէր այնպիսի հատուածներ, որոնք իրաւամբ կարող են նպաստել երեխաների բարոյական ու մտաւոր զարգացմանը։ Ահա թէ ինչու Երկրագունդը նախընտրում էր Ֆրանսիացի գրողներ Լամընէի (1782-1854), Հիւգոյի, ռուս դասականներից՝ Իւան Կռիլովի եւ այլոց գործերի թարգմանութիւնները։ Լամընէի ստեղծագործութիւններից Տեմիրճիպաշեանի թարգմանութեամբ Երկրագունդում տպագրուել է «Արի Զինուոր» սքանչելի բանաստեղծութիւնը։

Շարաթաթերթն ունի ազգային բաժին, որտեղ տպագրուել են պատմագիտական ու հայագիտական արժէքաւոր ստեղծագործութիւններ՝ «Ցիշատակ Աւարայրի», «Հայոց Պատմութիւն» եւն., ինչպէս նաեւ պատմակենսագրական, ճանաչողական արժէք ներկայացնող ակնարկներ, որոնք հարուստ տեղեկութիւններ են հաղորդում հանրահռչակ գիտնականների եւ անուանի մարդկանց մասին։[28]

Հանդէսի նպատակներից մէկը, որը ցայտուն երեւում է նաեւ նրա ծրագրային յօդուածներից, այն էր, որ մի կողմից ընթերցողներին հաղորդալուր դարձնէր եւրոպական մանկավարժութեան առաջաւոր սկզբունքներին եւ դպրոցի օրինակելի փորձին, իսկ միւս կողմից՝ ազգային դպրոցը զերծ պահէր կոյր մեխանիկական ազդեցութիւններից, այլապէս այն կը նմանուէր «Օտար կլիմայի տակ սնած, աճած ուրիշ կլիմայի օդ ծծած եւ ուրիշ կլիմայի ջրով ոռոգուած ծառէն փրցուած շիւղին (կամ նոյն իսկ ծառին), որ ուրիշ կլիմայի մը տակ տեղափոխուած ատեն չ'արգասաւորիր ու կը չորնայ»[29]։ Այդ նպատակով այստեղ տպագրւում էին մանկավարժական հիմնահարցերի վերաբերեալ ուշագրաւ յօդուածներ, որտեղ ըստ ամենայնի ներկայացւում էին նաեւ եւրոպական դպրոցների առաջաւոր փորձը։ Առաջարկւում էր՝ չանտեսելով ազգային դպրոցի առանձնայատկութիւնները՝ քննադատաբար եւ ստեղծագործաբար այն օգտագործել դաստիարակութեան ինքնուրոյն համակարգ մշակելու համար։ Այսպէս՝ հանդէսի «կրթա-

կան» բաժնում տպագրուեց Գոթայի ուսուցչական սեմինարիայի տեսուչ Գեհռի «Գերմանական Վարժապետարաններու Կազմութիւնը՝ Ժողովրդական Դպրոցներու Նկատմամբ Եւ Արդի Պահանջմանց Համեմատ» ծաւալուն յօդուածի թարգմանութիւնը (թարգմանիչ Ս. Մ.[30]), որտեղ բարձրացուում է ժամանակի պահանջներին համապատասխան ուսուցչական կադրերի պատրաստման հիմնահարցը։ Հարցի կարեւորութիւնը շեշտադրելու համար Գեհռը յիշեցնում է գերմանացի փիլիսոփայ եւ աստուածաբան Ֆրիդրիխ Շլայէրմախերի հետեւեալ միտքը. «Որչափ ազգ մը սակաւ զարգացած է, այնչափ ալ ժողովրդական վարժապետներու սակաւ կարօտութիւն ունի, բայց որչափ ազգի մը հոգեկան կեանքը աւելի ծլի, այնչափ ալ աւելի մեծամեծ պահանջողութիւններ պէտք է դրուի վարժապետներու կրթութեան համար»[31]։

Հանրայայտ ճշմարտութիւն է, որ դպրոցն ու կեանքը մշտապէս գտնուել են փոխադարձ կապի մէջ, ուրեմն հասարակական կեանքի առաջընթացին զուգահեռ՝ դպրոցները նոյնպէս պէտք է առաջընթաց ունենան։ Յօդուածագիրը բարձրացնում է նաեւ ուսուցչական սեմինարիաների ստեղծման ու ծաւալման, կրթութեան բովանդակութեան վերափոխման, կրթական ծրագրերի բարեփոխման, ուսուցման նոր սկզբունքներին համապատասխան դասագրքերի եւ ուսումնական ձեռնարկների ստեղծման հարցերը։

Երկրագունդը կարեւոր տեղ էր յատկացնում նաեւ Նուպար-Շահնազարեան վարժարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների վերլուծութեանը՝ հանգամանօրէն ներկայացնելով վարժարանի կրթական համակարգը, ուսուցման բովանդակութիւնը, դաստիարակութեան եւ ուսուցման դրուածքը եւ այլ հարցեր։ Տպագրուել են վարժարանի մրցանակաբաշխութեան հանդէսներին արտասանուած՝ Վարժապետեանի, Ամբրոսիոս Լուսինեանի (1826-1906), Նազարէթ Ներսիսեանի (1864-1922) եւ այլոց ուսուցողական բանախօսութիւնները։[32]

Երկրագունդը խորութեամբ լուսաբանել է նաեւ բարոյական դաստիարակութեան հիմնահարցերը։ Այսպէս՝ «Ուսումնական» բաժնում Երուսաղէմում լոյս տեսնող Սիոն ամսագրից արտատպելով[33], Երկրագունդը տպագրել է «Առաքինի Ու Քաղաքակիրթ Պատանի» շարքը[34], որտեղ հանգամանօրէն քննարկուել են բարոյական դաստիարակութեան նպատակը, բովանդակութիւնը, խնդիրները, մեթոդները, չօշափուել դաստիարակութեան այնպիսի հարցեր, ինչպիսիք են հայրենասիրութիւնը, աշխատասիրութիւնը, գթասրտութիւնը, ծնողասիրութիւ-

նը՝ միաժամանակ խարազանուել են դաւաճանութիւնը, անմիաբանութիւնը, քաղքենիութիւնը, օտարատենչութիւնը եւն.։

Հանդէսը ի շարս այլ հարցերի անդրադարձել է նաեւ աղջիկների դաստիարակութեան եւ կրթութեան հիմնահարցին։ Իր համարներից մէկում Երկրագունդը տպագրել է «Ֆիրխովի Մտածութիւնները Կանանց Դաստիարակութեան Վրայ» յօդուածը, որտեղ շօշափւում են աղջիկների ֆիզիկական, մտաւոր, բարոյական, եւ աշխատանքային դաստիարակութեան հարցերը, ինչպէս նաեւ նրանց՝ իբրեւ ապագայ մօր եւ քաղաքացու, հասարակական դերի բարձրացման հրատապ խնդիրը։ Սոցիոլոգիական վիճակագրական հակիրճ վերլուծութեամբ յօդուածագիրը տալիս է նաեւ ընտանիքի եւ ամուսնական կեանքի մի շարք բարոյահոգեբանական գիտական մեկնաբանութիւններ։

Հանդէսը յատուկ ուշադրութիւն է նուիրում կենդանաբանութիւն, բուսաբանութիւն, աշխարհագրութիւն, աստղագիտութիւն, առողջապահութիւն եւ բնագիտութիւն առարկաների գիտական հիմունքների քննութեանը, որն, անշուշտ, նպաստում էր սովորողների ճանաչողական ուժերի զարգացմանը եւ նրանց աշխարհայեացքի ձեւաւորմանը։ Երկրագունդը անդրադառնում էր նաեւ փիլիսոփայական հարցերի մեկնաբանմանը եւ մի շարք համարներում տպագրուել է «Տեսութիւն Փիլիսոփայութեան Վրայ» յօդուածաշարը։

ԱՒԵՏԱՐԵՐ ՏՂԱՑՈՑ ՀԱՄԱՐ

1872ին Պոլսում Ամերիկահայ Միսիոներական Ընկերութիւնը հիմնադրեց Աւետարեր Տղայոց Համար ամսագիրը, որը Աւետարերի յաւելուածն էր՝ նախատեսուած նախադպրոցական եւ դպրոցական տարիքի երեխաների համար։ Թերթը մինչեւ 1897 ունեցել է նաեւ հայատառ եւ յունատառ թուրքերէնով տպագրութիւններ՝ հրատարակուելով չորս, իսկ յետագայում՝ ութ էջից բաղկացած ծաւալով։ Պարբերականի արտօնատէրն էր Հ. Ք. Կրինը, իսկ տնօրէն-խմբագիրը՝ Հ. Ս. Պարնըմը, ապա՝ Ե. Պլէռը եւ Գրիգոր Գալուստեանը (1879-1963)։ Ամսագրին թղթակցում էին միսիոներական կազմակերպութեան անդամներ Մարտիրոս Դաւիթեանը, Ա. Պոյաճեանը, Յակոբ Մատթէոսեանը եւ ուրիշներ։ 1908ից թերթը վերանուանուել է Աւետարեր Մանկանց։ Ամսագրում տպագրուող նիւթերի գերակշիռ մասը ներկայացնում էր անստորագիր։ Պարբերականի հիմնական ուղղութիւնը քրիստոնէական բարոյախօսութիւնն էր՝ բողոքական դաւանանքի եւ Սուրբ Գրքի միջոցով։

Պարբերականի շուրջ կէսդարեայ գործունէութիւնը պայմանականօրէն կարելի է բաժանել երկու շրջանի՝ 1872-1908, եւ՝ 1909-1915։ Ու-

շագրաւ է, որ առաջին շրջանում հանդէսը կրում էր զուտ կրօնական ուղղուածութիւն եւ նրանում զետեղուած նիւթերը ներծծուած էին քրիստոնէական բարոյախօսութեամբ։ Մինչեւ անգամ հանելուկներն ընտրուած էին Աւետարանից, որոնք շարադրւում էին «Հանելուկ Սուրբ Գրքէն» խորագրի տակ։ Հրաժարուելով դաստիարակութեան նոր մեթոդներից ու ձեւերից՝ ամսաթերթն ամբողջովին ապաւինում էր աւետարանական պատգամներին ու փորձում էր մատաղ սերնդի դաստիարակութիւնը հիմնականում կառուցել քրիստոնէական վարքագրութեան կանոնների հիման վրայ՝ «Քու երկնաւոր հայրդ կը հոգայ քեզի համար։ Ան կ'ուզէ, որ բարի ըլլաս, եւ կը ցաւի, եթէ չես ըլլար։ Քեզի համար տեղ մը պատրաստած է երկնքին մէջ եւ կ'ուզէ որ հոն երթաս»,- *գրում է թերթը*[35]։ *Քրիստոնէութիւնը, որ մարդաբանութեան զարգացման վերաբերեալ ունի իր ուրոյն տեսակէտը, իւրովի էր մեկնաբանում համամարդկային սիրոյ գաղափարը՝ դրա հիմքում դնելով խոնարհութիւնը, հնազանդութիւնը, քրիստոնէական բարեպաշտութիւնը, խոր հաւատը։ Հանդէսը պատանի ընթերցողին համոզում էր, որ* «Հեզերն են, որ կ'օրհնուին, խոնարհներն են, որոնք շնորհ կը գտնեն», *եւ այս գաղափարը դարձնելով գործունէութեան հիմնական նպատակ՝ նա քարոզում էր կրօնաբարոյական գաղափարախօսութիւն։ Այս եւ այլ պատճառներով ամսագիրը խիստ քննադատուել է առաջադէմ մտաւորականների եւ ժողովրդավարական ուղղութիւնը ներկայացնող պարբերականների՝ առաջին հերթին Յակոբ Պարոնեանի Թատրոնի եւ Մանզումէի Լիքքեարի կողմից։ Այդ մասին բանասէր Գառնիկ Ստեփանեանը գրում է.* «Նա [*Աւետաբեր Մանկանցը*] չէր տպագրում հայ իրականութեան հետ կապուած եւ ոչ մի նիւթ, հայ ժողովրդի անցեալն ու ներկան արտացոլող որեւէ պատմուածք, չէր հրապարակում առհասարակ աշխարհիկ որեւէ բան»[36]։

Սակայն իր գործունէութեան երկրորդ շրջանում, որը համընկնում էր 1908ի Օսմանեան կայսրութեան սահմանադրական շրջանին, հանդէսում զգալի դրական փոփոխութիւններ կատարուեցին։ Այդ երեւոյթն աւելի ցայտուն դարձաւ, երբ թերթը խմբագրում էր Գ. Գալուստեանը, որի շնորհիւ թերթի էջերում կրօնաշունչ յօդուածների հետ մէկտեղ շուտով երեւան եկան նաեւ աշխարհիկ բովանդակութեամբ եւ ազգային հարցեր շօշափող հետաքրքիր եւ ուշագրաւ յօդուածներ։ Այդ մասին Հալէպում լոյս տեսնող Բուրաստանը գրում է, որ Աւետաբեր Մանկանցի 44 տարիների ընթացքում «...բացառիկ յիշատակութեան արժանի են վերջին 6 տարիները միայն, երբ այն լոյս տեսաւ կրկնա-

պատկուած ծաւալով եւ այլազան ու ճոխացած բովանդակութեամբ...»[37]։ *Այս շրջանում տպագրւում են հայ եւ այլազգի նշանաւոր մարդկանց կենսագրականները, դասական գրողների ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ, հրատարակւում են իրական կեանքը պատկերող յօդուածներ եւն։ Հետաքրքրութեան արժանի է այն փաստը, որ 1914ին ամսագրում բացուեց «Մեր Նամակատուփը» բաժինը, որի նպատակը օտար ափերում ծուարած հայ մանուկների կեանքի մասին տեղեկութիւններ հաղորդելն էր։ Այդ մասին Թերթը գրում է.* «Այս էջին վրայ դուք եւ ես նամակներ կը գրենք իրարու եւ մեր վիճակին եւ գործելու վրայ տեղեկութիւններ կու տանք։ Հետաքրքրական չը՞լլար ամսէ ամիս նամակներ կարդալ խարբերդցի տղայէ մը, կամ վանեցի աղջիկէ մը, կամ հայ մանուկէ մը, որ Ամերիկա գաղթած է, եւ իմանալ, թէ այն տեղերուն մէջ ինչ կ՚ընեն եւ ինչպէս կ՚ապրին»[38]։

Անկախ այն բանից, որ Աւետարեր Մանկանցը ունէր կրօնական ուղղուածութիւն եւ նպատակ էր դրել կրօնական դաստիարակութեան միջոցով սրբագործել միսիոներական դաւանաբանական ուսմունքի պատուիրանները, այդուհանդերձ, արեւմտահայ պարբերական մամուլի պատմութեան մէջ այն թողել է լրագրական արուեստի ուսանելի աւանդոյթներ՝ գեղեցիկ ձեւաւորում, ճաշակով ընտրուած պատկերազարդ նկարներ, բուսական ու կենդանական աշխարհի վերաբերեալ գիտահանրամատչելի ակնարկներ, բարոյախօսական հետաքրքիր զրոյցներ եւ մանրապատումներ, որոնք գիտելիքներին զուգընթաց գեղագիտական հաճոյք են պատճառել պատանի ընթերցողներին։

Ժամանակի պարբերական մամուլը, ըստ արժանւոյն գնահատելով Աւետարեր Մանկանցի դերը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում, գրում է. «Երեսուն տարուան մէջ 100-120 տեսակ Լրագիր ու Հանդէս ի լոյս ընծայուեցան զանազան նիւթոց վրայ խօսող, բայց կ՚ամաչեմք ըսել, որ անոնցմէ տասն իսկ մինչեւ այսօր չմնացին։ ...Այսչափ Լրագրաց եւ Հանդէսներու մէջ մին՝ Թատրոն բարեկամ մանկանց եւ միւսը Աւետաբեր տղայոց, իրենց նպատակ ընտրեցին Տղայոց հետ խօսիլ. սակայն առաջինը հազիւ երկու տարուոյ չափ տղայոց հետ խօսելու տարաբաղդութիւնը եւ վերջինը շնորհիւ Ամերիկացի Պատ. միսիոներաց մինչեւ ցայսօր շարունակելու բարեբաղդ վիճակն ունեցան»[39]։ *Այս երկու հանդէսների գործունէութիւնը նպատակային էր եւ շատ կարեւոր՝ երեխաների դաստիարակութեան համար. դրանց հրատարակութիւնը աւելի էր կարեւորւում, երբ եւրոպական երկրներում գրեթէ ամէն օր մէկը միւսի յետեւից լոյս էին ըն-*

ծայում անհամար քանակութեամբ մանկական նմանատիպ գեղեցիկ հանդէսներ։

Զարգացնց տխուր եւ յուսահատական տպաւորութիւն էր թողնում այն իրողութիւնը, որ արեւմտահայ հասարակայնութիւնը դեռեւս ամբողջովին չէր գիտակցում եւ արժեւորում մանկական պարբերականների անհրաժեշտութիւնը եւ դերակատարութիւնը երեխաների դաստիարակութեան գործում։ Դեռ աւելին, իշխում էր այն թիւր կարծիքը, որ այդօրինակ նախաձեռնութիւնն անպտուղ աշխատանք եւ աւելորդ շռայլութիւն է ազգի համար[40]։

ԹԱՏՐՈՆ ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ

ԺԹ. դարի 70ականներին հրապարակախօսական ասպարէզ իջաւ Պարոնեանը. նա իր լրագրական եւ հրապարակախօսական առաջին քայլերը կատարել էր *Եփրատ* եւ *Մասիս* պարբերականներում։ 1872ից նա թղթակցում է նաեւ Յակոբ Սվաճեանի *Մեղու* ամսագրին, եւ կարճ ժամանակով դառնում նաեւ նրա խմբագիրը։ Թերթի փակուելուց յետոյ (1874) Պարոնեանը հիմնում է *Թատրոն* (1874-1877) եւ *Թիեաթրո* (1874-1875) պարբերականները։ 1876ին նա լոյս ընծայեց *Թատրոն Բարեկամ Մանկանց* պատկերազարդ մանկական հանդէսը։ Միեւնոյն ժամանակ նա խմբագրում էր նաեւ *Լոյսը* (1874-1885)[41] եւ թղթակցում *Փորձ* եւ *Փարոս Հայաստանի* (1879-1881) պարբերաթերթերին։ Քաջ գիտակցելով, որ մանկավարժական մամուլը երիտասարդ սերնդի դաստիարակութեան կարեւորագոյն օղակներից մէկն է, Պարոնեանը հնարաւորութեան սահմաններում ձգտում էր օժանդակել դպրոցին, բաւարարել պատանի ընթերցողների կրթասիրական պահանջները, զարգացնել նրանց ճանաչողական հետաքրքրութիւններն ու աշխարհայեցողութիւնը։ «Խօսք Առ Ծնողս եւ Պաշտպանս Տղայոց» ծանուցման մէջ[42] ուրուագծւում են հանդէսի նպատակն ու խնդիրները, ուղղութիւնն ու ծրագիրը։ Որքապէս գիտակցելով, որ դեռ վաղ է երեխաներին հաղորդակից դարձնել համաշխարհային գիտական յայտնագործութիւններին եւ գիտելիքներ ու ծանօթութիւններ հաղորդել հանրահռչակ գիտնականների ու փիլիսոփաների մասին՝ հանդէսն իր առջեւ նպատակ էր դրել նախ եւ առաջ նրանց մէջ սերմանել բարոյական բարձր յատկանիշներ՝ առաջնորդուելով հին հռոմէացի փիլիսոփայ Սենեկայի՝ «Սկզբում սովորիր բարի բարքեր, յետոյ՝ իմաստութիւն, այլապէս առանց առաջինի դժուար է սովորել երկրորդը» պատուիրանով։ Հանդէսի ուղղութիւնը բխում էր խմբագրի համոզմունքներից եւ նրա պաշտպանած առաջադիմական գաղափարներից։ Հանդէսի առաջին

համարի՝ «Ցառաջաբան Իմ Պզտիկ Կարդացողներս»[43] խմբագրականում հանգամանօրէն լուսաբանւում են թերթի ծրագիրը, բովանդակութիւնը, նպատակը, առաջադիր խնդիրները եւ նրա գործունէութեան յետագիծը։ Առաջին հերթին ներկայացւում է թերթի հասցէատէրը, սահմանւում նրա իրաւունքներն ու պարտաւորութիւնները։ «Այս Թատրոն լրագիրը 15 օրը հեղ մը պիտի տպուի յատկապէս ձեզի համար։ Ինտոր որ ձեր հայրերը կամ ձեր մեծերը ամէն օր խոշոր խոշոր լրագիրներ կը կարդան բան հասկնալու համար, նոր բաներ իմանալու համար, անանկ ալ դուք այս Թատրոնը կարդալով ձեր չգիտցած շատ բաները պիտի սորվիք»[44]։

Հանդէսն ուղիղ կապ էր հաստատել իր շատ ընթերցողների միջեւ՝ ստանձնելով դպրոցի դեր, որտեղ իրագործւում էր աշխոյժ եւ հետաքրքիր ուսուցման գործընթաց. «Շատ դասեր պիտի տամ ձեզի, եւ ամէն շաբթու համարնիդ պիտի նայիմ. երբ որ դասերնիդ աղէկ սերտած ըլլաք, պիտի փոխեմ համարնիդ, նորըզնոր դասեր պիտի տամ, զբօսանքներ ալ պիտի սահմանեմ ձեզի, աղուոր պատմութիւններ պիտի պատմեմ, խաղեր պիտի սորվեցունեմ, հանելուկներ (պիլմեճէ) պիտի ըսեմ ձեզի որ լուծէք»[45]։

Թատրոն Մանկանցը հրատարակւում էր իւրաքանչիւր ամսուայ 1ին եւ 16ին, ընտիր թղթի վրայ, գեղեցիկ նկարներով պատկերազարդուած, որը մի կողմից՝ նպաստում էր նիւթի հեշտ ընկալմանը, իսկ միւս կողմից՝ լուծում նաեւ գեղագիտական դաստիարակութեան խնդիրներ։ Հանդէսի բովանդակութիւնը, նիւթերի հերթագայութիւնը կառուցուած էր այնպէս, որ այն համատեղ լուծում էր նախադպրոցական ու կրտսեր դպրոցական տարիքի երեխաների դաստիարակութեան խնդիրներ։ Այսպէս՝ մտաւոր դաստիարակութեան համար անսպառ նիւթ էին ուսումնական ու հանրամատչելի գիտելիքները, բազմաբնոյթ գիտական հրահանգներն ու ծանօթութիւնները, պատմաաշխարհագրական կարեւոր տեղեկութիւնները, գրավարժութեան համար՝ նամակներն ու երկխօսութիւնները, բարոյական դաստիարակութեան համար՝ բարոյախօսական զրոյցներն ու բարոյագիտական մանրապատումները, կրօնական դաստիարակութեան համար՝ Աստուածաշնչի ու Աւետարանի պատուիրանները եւ Ս. Հայրապետների վարդապետութիւնները եւ վերջապէս՝ հատընտիր առակներն ու հանելուկները, զուարճալի խաղերն ու երեխաների ընթերցասիրութիւնը զարգացնող գրական ընտիր հատուածները, որոնք բոլորն էլ գրուած էին գեղարուեստական բարձր ճաշակով եւ գրական գեղեցիկ ոճով։ Հանդէսը տալիս էր մանկական գրադարան ստեղծելու գաղափարը՝ «...անոր

համար չըլլայ, որ այս լրագիրը պատռոտէք կարդալէն ետքը, հապա պահեցէք... գալ անգամ նոր Թատրոն մըն ալ պիտի խրկեմ ձեզի, ասոր քովը դրէք եւ իրարու կարեցէք. ասանկ ամէն անգամ մէյ մէկ նոր Թատրոն առնելով՝ մէկ տարուան մէջ խոշոր գիրք մը ունեցած կ՚ըլլաք»[46]։

Հանդէսի ծրագրային խնդիրներից մէկը երեխաների հետ մայրենի լեզուով խօսելը եւ այն անաղարտ պահելու ձգտումն էր, որի համար արւում էր ամէն ինչ՝ չխնայելով ջանք ու եռանդ։ Դիմելով պատանի ընթերցողներին՝ հանդէսը գրում է. «Ձեր մէջ կան շատեր որ գիտուն տղու մը չվայլելիք բառեր կը գործածեն անոնց հայերէնը չգիտնալով. կան տղաքներ, որ իրենց հօրը աղըպպա կը կանչեն՝ չգիտնալով որ Հայրիկ պէտք է ըսել. ասանկ ալ չեն գիտեր որ Մայրիկ պէտք է կանչէլ տուտու (*այս եւ յաջորդ ընդգծումները բնագրային են - Շ.Ռ.*) ըսելու տեղ։

Ասոր պէս շատ բառեր կան՝ որոնց հայերէնը չէք գիտեր դուք. ահա այս Թատրոնին մէջ ես անանկ բառերուն ամէն մէկին առջեւ հայերէնը պիտի դնեմ՝ որ դուք աշխատելով սորվիք եւ պէտք եղած ատենը սխալ բառ չգործածէք»[47]։ *Պարոնեանը կարեւորելով մայրենի լեզուի դերը՝ միաժամանակ բարձրացնում է այն օտարամուտ բառերից ձերբազատելու պահանջը.* «Մեծ ամօթ է հայ տղու մը համար երբոր չգիտնայ թէ օտային հայերէն սենեակ կ՚ըսեն, պաղճային պարտէզ կ՚ըսեն...», *իսկ աւելի նուաստացուցիչ է, երբ երեխան* «բառերուն հայերէնը գիտէ եւ չը գործածեր»։ *Հանդէսի էջերում խարազանւում էր օտարամոլութիւնը, կոյր մեխանիկական ընդօրինակումը եւ առաջադրւում էր ուսուցումը մայրենի լեզուով կազմակերպելու խնդիրը. հարցադրում, որն այդ ժամանակաշրջանում բախտորոշ էր արեւմտահայութեան համար։*

Հանդէսի ծրագրային հիմնադրոյթներից մէկն էլ հայ մանուկներին այն ամէնը սովորեցնելն էր, ինչն անհրաժեշտ էր «կրթեալ եւ գովելի տղայ ըլլալու համար», *ուրեմն՝ մտաւոր գիտելիքներից զատ հանդէսը կարեւորում էր նաեւ դրական վարքագծի ձեւաւորման եւ բարոյական գիտելիքների դերը։ Այն հանգամանքը, որ ոչ բոլոր ընտանիքներում երեխաները կարող էին բարոյական ճիշտ դաստիարակութիւն ստանալ, խմբագրութեանը պարտաւորեցնում էր, որ մանուկների ուշադրութիւնը հրաւիրի իրենց նիստուկացի, բարեկիրթ վարուեցողութեան եւ կենցաղային քաղաքավարութեան տարրական կանոնների պահպանման վրայ։ Այլ կերպ ասած՝ հանդէսը երեխաների հետ քննարկում էր*

այն ամէնը, ինչը բացակայում էր դասագրքերում եւ չէր ուսուցանւում դպրոցում եւ ընտանիքում։

Թատրոն Բարեկամ Մանկանոցը իր ծրագրային հիմնադրոյթներով ծառայում էր որպէս մանկական հանրագիտարան, որտեղ 3ից 15 տարեկան երեխաներին հաղորդւում էին կարեւոր, օգտակար եւ հանրամատչելի գիտելիքներ։ Պարոնեանի պարբերականը եւ ընդհանրապէս նրա բոլոր ստեղծագործութիւններն արժէքաւոր էին ոչ միայն նրա համար, որ առաջադրում էին բարոյական դաստիարակութեան նոր մօտեցումներ, քննարկում հասարակական-քաղաքական, սոցիալական-կենցաղային, արդիական, դեռեւս ոչ մէկի կողմից չառաջադրուած խնդիրներ, այլեւ դրանք լուսաբանւում էին ոչ քարոզչաբար, ոչ տեսական դատողութիւններով, այլ կեանքից բխած օրինակները, երեւոյթները սպանիչ հումորով ներկայացնելու մեթոդով։ Զբաւարարուելով այդ ամէնով՝ Պարոնեանն իր պատանի ընթերցողներին յորդորում էր որ նրանք թերթում տպագրուած նիւթերը «իրենց պզտիկ եղբօրը կամ քրոջը հասկցնեն եւ սորվեցնեն»։ Այդ եղանակով կը լուծուէր երկու կարեւոր խնդիր. մի կողմից՝ կրկնելով սովորածը՝ աւելի լաւ կ՝իւրացնեն նիւթը, միւս կողմից՝ կ՝օժանդակեն նախադպրոցական տարիքի երեխաների դաստիարակութեան գործին։

Հանդէսը կարեւորում էր նաեւ աշխատանքային դաստիարակութեան դերը, որի հիմքերը պէտք է դրուեն վաղ տարիքում։ Աշխատանքային դաստիարակութեան ճիշտ կազմակերպումն իր հերթին օգնում է պատանիների մասնագիտական կողմնորոշմանը։ Այդ մասին հանդէսը գրում է. «Մանչերուն համար արհեստներուն (զէնաաք) պատմութիւնը՝ պիտի ընեմ, որ երբոր մեծնան իրենց ուզած արհեստն ընտրեն։ Շատ տղայ կ՝ուզէ որ իր մեծցած պտենը բանելիք արհեստն այսօրուընէ որոշէ. տղայ մը պզտիկուց կուզէ որ ժամագործ (սահաթճի) ըլլայ, ուրիշ տղայ մը կը փափաքի որ բժիշկ (հեքիմ) ըլլայ, ուրիշ մըն ալ սեղանաւոր (սարաֆ) ըլլալ կուզէ, բայց կը կարծէ որ այս արհեստներէն մէկուն հետեւելու համար հերիք է որ մեծնայ. չգիտեր որ ժամագործ կամ սեղանաւոր եղողը աղէկ թուաբանութիւն եւ գիր գրել գիտնալու է, եթէ ոչ ձիավարէն (պեկիրճի) ուրիշ բան չկրնար ըլլալ»[48]։

Թերթն ունէր նաեւ կրօնական բաժին, որտեղ տպագրւում էին Աստուածաշնչից եւ այլ կրօնական գրքերից խնամքով ընտրուած բարոյախօսական գրոյցներ, որոնք նպաստում էին երեխաների կրօնաբարոյական դաստիարակութեանը. դրանք հիմնականում ծառայում էին իբրեւ օժանդակ միջոցներ՝ բարոյագիտական նոր գրոյցներ ստեղծելու համար, որի շնորհիւ հեղինակի ասելիքը դառնում էր աւելի դիպուկ եւ

համոզիչ։ Այսպէս, օրինակ, «Ադամ Եւային Խաբուիլը» գրոյցի միջոցով հեղինակը հետամտում է երկու կարեւոր նպատակ, նախ՝ երեխաներին ծանօթացնել Աստուածաշնչի բովանդակութեանը եւ երկրորդ՝ դրա հիման վրայ հիւսել բոլորովին նոր բովանդակութեամբ պատմութիւններ։ Տուեալ դէպքում յօրինւում է «Թագաւորի Եւ Փայտ Կտրող Ամուսինների» պատմութիւնը եւ տրւում դրանից բխող բարոյական ուսանելի դասերը։ Այս պատմուածքում շօշափւում է այն միտքը, որ շատ յաճախ ծոյլ ու անբան մարդիկ մեղադրում են Ադամին ու Եւային, որ նրանք խաբուեցին օձի կերպարանք առած սատանայի գայթակղութիւններից եւ կերան արգելուած պտուղը, որի համար Աստուած նրանց վռնդեց դրախտից՝ պատուիրելով, որ այսուհետեւ նրանք ապրեն իրենց սեփական քրտինքով վաստակած աշխատանքով։ Նրանց մեղադրողներից մէկն էլ անտառում փայտ կտրող կինն էր, որն իր ամուսնուն դժգոհելով ասում էր. «Ախ թէ որ Աստծոյ դէմ անհնազանդութիւն չընէին, մենք հիմա չպիտի դատապարտուած ըլլայինք ասանկ օրն ի բուն աշխատելու եւ մեր հացը ճակտի քրտինքով վաստակելու»[48]։ Երբ այս խօսակցութիւնը լսում է աղքատի շորերով ծպտուած թագաւորը, եւ որպէսզի ցոյց տայ, որ մարդ արարածը զերծ չէ սխալներ գործելուց, նրանց տանում է իր պալատը եւ ենթարկում զանազան փորձութիւնների՝ այն ժամանակ պարզ է դառնում, որ ամէն մարդ էլ ենթակայ է գայթակղութեան, ուրեմն մարդն անթերի չէ եւ ցանկացած առիթով կարող է սխալուել։ Զրոյցի հիմնական գաղափարն այն է, որ մարդը դաստիարակւում է աշխատանքի մէջ, եւ նրա առաջին դաստիարակն իրական կեանքն է՝ իր բոլոր դժուարութիւններով եւ կենսական պահանջներով հանդերձ։

Հանդէսի ծրագրային խնդիրներից մէկն էլ կենդանական եւ բուսական աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելն էր։ Թերթի իւրաքանչիւր համարում տպագրւում էին կենդանիների եւ թռչունների մասին հետաքրքրաշարժ պատմուածքներ, որոնք հարստացնում էին երեխաների կենդանաբանական եւ բնագիտական գիտելիքները («Կապիկը», (թիւ 2, 1876), «Վարդան Եւ Մեղու», (թիւ 3, 1876), «Գայլ», (թիւ 3, 1876), «Նապաստակ», (թիւ 14, 1876), «Եղնիկ», (թիւ 5, 1876), «Կարապ», (թիւ 3, 1877) եւն.)։

Հանդէսի հոգեբանամանկավարժական եւ ճանաչողական կարեւոր արժէքն այն է, որ խնամքով ընտրուած մանրավէպերի ու պատմուածքների նախատիպը անծանօթ չէր երեխաներին. դա իրենց միջավայրում ապրող գիւղացին էր, մշակն էր, արհեստաւորն էր, ուսուցիչն էր, բժիշկն էր, որոնք մարմնաւորելով այս կամ այն կերպարը՝ աւելի տի-

պական էին դարձնում այն եւ իրենց օրինակով, վարքագծով, նիստուկացով օգնում էին երեխաներին ճիշտ դատելու իրենց եւ ուրիշների բարոյական արարքների մասին։ Հանդէսի մի շարք համարներում՝ «Մանրվէպեր» խորագրի տակ տպագրուեցին Մամուրեանի, մանկական ընտրանի չափածոյ պատմուածքները, որոնցով անուանի մանկավարժը բարոյագիտական դասեր էր տալիս մանուկներին, սովորեցնում նրանց ճանաչել կեանքն իր բոլոր կողմերով, զգուշացնում չհրապուրուել իրերի ու երեւոյթների արտաքին տեսքով, կարողանալ ճիշտ կողմնորոշուել ցանկացած իրավիճակում։

Մանկագրի յատուկ բծախնդրութեամբ Պարոնեանը Թատրոն Բարեկամ Մանկանցի համար որպէս ընթերցանութեան նիւթ ջոկում էր հայ եւ եւրոպական գրողների լաւագոյն ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ, հեքիաթներ, առակներ, հանելուկներ, որոնք զարգացնում էին երեխաների ստեղծագործական երեւակայութիւնը, ընդլայնում ճանաչողական հետաքրքրութիւնների շրջանակը եւ նպաստում նրանց լեզուամտածողութեան ունակութիւնների զարգացմանը։ Արեւմտահայ կեանքում հայ մանուկը թերեւս առաջին անգամ Թատրոն Բարեկամ Մանկանցի միջոցով հնարաւորութիւն ստացաւ ծանօթանալու եւրոպական ժողովրդական հեքիաթներին։ Ուշագրաւ է այն, որ շատ հեքիաթներ անուանի գրողի գրչի տակ ստանում էին ազգային կերպաւորում՝ նպատակ ունենալով հայ մանուկների համար աւելի մատչելի եւ դիւրըմբռնելի դարձնել հեքիաթի իմաստն ու բովանդակութիւնը։ Պարոնեանը պարզ, անկաշկանդ եւ հետաքրքիր երկխօսութիւն է ծաւալել թերթի եւ ընթերցողների միջեւ։ Նա անկեղծօրէն խոստովանում է, որ հանդէսում տպագրուած շատ պատմութիւններ ինքը լսել ու սովորել է իր փոքրիկ բարեկամներից։

Հանդէսի ծրագրային բաժիններից մէկը առակների, խրատիկների, առածների, հանելուկների եւ վանկահանելուկների, ասոյթների եւ ասացուածքների շարքն էր, որոնք ծառայում էին որպէս կարեւոր միջոցներ բացատրական ու արտայայտիչ ընթերցանութեան համար։ Առակներում ցայտուն ու վառ գոյներով պատկերւում է չարի եւ բարու պայքարը՝ մարմնաւորուած դրական ու բացասական կերպարներով։ Անչափ մեծ է առակի ճանաչողական եւ կրթադաստիարակչական դերը մատաղ սերնդի դաստիարակութեան գործում։

1877 Յունիսից հանդէսի խմբագրութիւնը ստանձնեց Կարապետ Եազմաճեանը, որը շարունակեց Պարոնեանի որդեգրած գաղափարաբարոյական ուղղուածութիւնը՝ ստեղծելով նաեւ ծրագրային նոր բաժիններ՝ «Բարոյական Վէպեր», «Բարոյական Դասեր», «Մտաւոր Վար-

ժութիւններ» եւ «Զուարճալի Խաղեր»։ Բարոյական վէպեր բաժնում մէկը միւսի յետեւից տպագրւում են «Որբ Տղան» (թիւ 1, 1877), «Հպարտութիւն Եւ Վեհանձնութիւն» (թիւ 3), «Ժամանակին Ցարգը Գիտցէք» (թիւ 5), «Բժիշկ Եւ Գիւղացի» (թիւ 7) եւ այլ պատմուածքներ, որոնք հարստացնում են երեխաների բարոյագիտական գիտելիքները եւ նրանց մէջ դաստիարակում ազնուութիւն, ընկերասիրութիւն, ճշմարտախօսութիւն, երախտագիտութիւն, աշխատասիրութիւն եւ բարոյական դրական այլ յատկութիւններ։ Հանդէսում առանձնակի տեղ են գրաւում հայրենասիրական, մարդասիրական ու ազգասիրական բնոյթի բարոյական վէպերն ու պատմուածքները։

Սակայն Թատրոն Բարեկամ Մանկանցի հրատարակութիւնը նոյնպէս երկար չտեւեց։ Համապատասխան թուով բաժանորդներ չունենալու պատճառով 1878 Ցունիսին այն ընդմիշտ փակուեց։

ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ

1882ին Պոլսում Նշան Պէրպէրեանը (1842-1907)՝ Կարապետ Գարակիւլեանի (1866-1920) եւ Սարգիս Տէօվլէթեանի խմբագրութեամբ, հրատարակեց Բուրաստան Մանկանց պատկերազարդ կիսամսեայ հանդէսը, որը բարոյական, կրօնական, պատմական, ուսումնական, աշխարհագրական եւ այլ անհրաժեշտ գիտելիքների, մանկական գրական չափածոյ պատմուածքների, զուարճալի խաղերի, այլաբանական զրոյցների, ասացուածքների, շուտասելուկների, առածների ու հանելուկների մի իւրօրինակ եւ հետաքրքիր հաւաքածու էր։ Հանդէսն իր ծրագրային տարբեր բաժիններով, հարուստ բովանդակութեամբ, նիւթերի ընտրութեամբ եւ մատուցման ձեւով կրել է եւրոպական մանկապատանեկան նմանատիպ հանդէսների ազդեցութիւնը։ Պատահական չէր, որ նրա խմբագիր-հրատարակիչները սերտ կապեր ունէին եւրոպական հանրայայտ խմբագրութիւնների հետ։ Բուրաստան Մանկանցը համագործակցում էր նաեւ Աղբիւրի հետ, որի մասին գրում է. «Աղբիւրը՝ որ ռուսահայ Բուրաստանն է, ճիշտ մեր դերն կը կատարէ զարգացնելով եւ ընդարձակելով՝ մանկանց բարոյականն, ուստի եւ արժանի է ամէն տեսակ քաջալերութեան»[50]։ Հանդէսն ունէր գիտահանրամատչելի բնոյթ, որի համար յաճախ քննադատւում էր «տղայոց համար չափազանց լուրջ» լինելու պատճառաբանութեամբ[51]։ Սակայն հանդէսի խմբագիրներն իրենց ընդդիմախօսներին տալիս են սպառիչ պատասխան՝ հիմնաւորելով, որ Հայաստանում մանկական լրագրերը, ինչպէս եւրոպական երկրներում, դեռեւս կանոնակարգուած չեն ըստ տարի-

քային շրջանների, հետեւաբար՝ մայրենի լեզուով հրատարակութիւնները պէտք է համապատասխան լինեն երեխաների տարիքային առանձնայատկութիւններին, նրանց հետաքրքրութիւններին ու նախասիրութիւններին, այսինքն՝ «նրանց նիւթերն աստիճանաւոր եւ խառն լինին»[52]։ Հանդէսը, որ լոյս է տեսել վեց տարի, համապատասխանաբար բաղկացած էր վեց հատորից, հատորը՝ 24 տետրից, տետրը՝ 16 էջից՝ հետեւեալ բաժիններով.

1) նշանաւոր մարդկանց մանկութեան եւ կեանքի յիշարժան դէպքերի մասին պատմուածքներ՝ լուսանկարներով հանդերձ,

2) մանկական վէպեր, բարոյական մանրավէպեր, գիտութիւնների ու արուեստների վերաբերեալ հանրամատչելի ծանօթութիւններ ու տեղեկութիւններ,

3) շուրջերկրեայ ճանապարհորդութիւնների մասին ուսումնագիտական հանրամատչելի պատմուածքներ,

4) զուարճալի խաղեր, շուտասելուկներ, հանելուկներ, առակներ,

5) քաղաքավարութեան եւ մարմնակրթութեան վերաբերեալ դաստիարակող եւ ուսուցանող դասեր։

Ծրագրային նիւթերն ընտրելիս ու դասակարգելիս խմբագրութիւնն ամենայն հաւանականութեամբ առաջնորդուել է եւրոպական համանման հանդէսների ու լրագրերի սկզբունքներով ու ընդօրինակել նրանցից։ Ծրագրային նիւթերը ժամանակագրական որոշ կտրուածքով դիտարկելիս՝ ակնյայտ երեւում է, որ խմբագիր-հրատարակիչները ջանք չեն խնայել միջազգային չափանիշներին համապատասխան թերթ հրատարակելու համար։

Հանդէսի առաջին հատորը, որը բաղկացած էր 384 էջից, պարունակում է աւելի քան 170՝ մէկը միւսից գեղեցիկ եւ ճաշակով կատարուած նկարներ, որոնց հեղինակները խմբագիր-հրատարակիչներն էին։ Հանդէսին թղթակցում էին ինչպէս Պոլսի, Զմիւռնիայի եւ Թուրքիայի հայաշատ կենտրոնների հայկական դպրոցների աշակերտները, այնպէս էլ անուանի գրողներն ու հրապարակախօսները։

Բուրաստան Մանկանցում մեծ թիւ են կազմում այլաբանական փոքրածաւալ զրոյց-պատմուածքները, որոնց միջոցով երեխաները ծանօթանում էին կեանքում եւ կենցաղում տեղ գտած ինչպէս բացասական, յոռի երեւոյթներին, այնպէս էլ կեանքի գեղեցիկ կողմերին։

Այսպէս, օրինակ, «Ցորենի Հասկերը» փոքրածաւալ զրոյցում ցոյց է տրուած, թէ ինչպէս մի հողագործ իր որդու հետ դաշտ է դուրս գալիս՝ տեսնելու՝ ցորենի հասկերը հասունացե՞լ են, թէ՞ ոչ։ Փոքրիկ տղան, ցո-

րենի հասկերը տեսնելով, հարցնում է հօրը. «Հա՛յր իմ, ըսաւ տղան, ինչ՞ն է որ սա ցօղունններէն ոմանք ծռած են, ոմանք ալ ուղիղ կը կենան: Անշուշտ ուղիղներն աղէկ են եւ ծռածները գէշ»: *Հայրը, լսելով այդ, վերցնում է երկու հասկ եւ տղային ասում.* «Նայէ՛ տղաս, այս հասկը որ, պարկեշտութեամբ ծռած էր, գեղեցիկ հատիկներով լի է. ընդհակառակն՝ միւսը որ հպարտութեամբ գլուխը բարձր բռնած էր, բոլորովին պարապ է: Այսպէս է ահա՛ աշխարհի մէջ ամէն բան. տգէտներն հպարտ, իսկ գիտուններն համեստ են»[53]:

Երեխաների մէջ բարոյական զգացմունքներ (խիղճ, գթասրտութիւն, բարութիւն, ուրախութիւն, տխրութիւն եւն.) դաստիարակելու համար չափազանց արժէքաւոր են բուսական ու կենդանական աշխարհից քաղուած մանրապատումները։

Հանդէսի ծրագրային բաժիններում առանձնայատուկ տեղ են գրաւում ժողովրդական բանահիւսութեան նիւթերը՝ հեքիաթներն ու ասացուածքները, հանելուկներն ու առածները։ Այստեղ տպագրուել են ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային ժողովրդական բանահիւսութեան գանձերը։ Հանդէսի մի շարք համարներում տպագրուել են «Նաւապետի Շունը», «Բիէմոնթէի Հովիւը» (տետր 1ից՝ 18ը) *եւ այլ պատմուածքներ։ Իրենց գեղարուեստական բարձր արժէքով աչքի են ընկնում Ռ. Պատկանեանի, Աղեքսանդր Փանոսեանի* (*Ալփասլան*, 1858-1919), *Ա. Մեհրաբեանի* (1865-1921) *եւ այլոց բանաստեղծութիւնները, որոնք տպագրուել են «Տղայոց Համար» խորագրի տակ։ Այստեղ են տպագրուել Ռ. Պէրպէրեանի «Առաւօտ»* (տետր 19, 1882թ., էջ 299), *«Իմ Հայրիկ»* (տետր 21, 1882, էջ 326), *«Աստուած»* (տետր 22, 1882թ., էջ 342), *«Աչունն Ալ Կ'անցնի»* (տետր 24, 1882, էջ 376), *Հայր Ղեւոնդ Ալիշանի* (1820-1901) *«Ցարեաւ Զէ Աստ», «Ի Ծնունդն Յիսուսի»* (տետր 1, 1883, էջ 4) *եւ այլ բանաստեղծութիւններ։*

Բուրաստան Մանկանցի կարեւոր ձեռքբերումներից մէկն այն էր, որ նա սկիզբ դրեց գրականութեան գիտահանրամատչելի ակնարկի ժանրին, որն իր յետագայ զարգացումը գտաւ միւս պարբերականներում։ Այսպէս՝ տպագրուել է «Շոգեշարժ Մեքենայի Գիւտը» (տետր 2, 3, 4, 1882), *որտեղ պատմւում է, թէ ինչպէս դեռեւս Քրիստոսի ծնունդից 120 տարի առաջ Հերոն Ալեքսանդրիացին արդէն ունէր շոգու հզօրութեան վերաբերեալ աշխատութիւններ, «Ճանապարհորդութիւն Տոքթէօր Քրրուոյի»* (տետր 3, 5, 7, 1882), *որտեղ պատմւում է, թէ ինչպէս Ֆրանսիացի ծովային առաջին կարգի բժիշկ դոկտոր Քրուոն կատարել է երկու մեծ ճանապարհորդութիւն Ամերիկայում, «Քրիստափոր*

Գոլոմպոս կամ Ամերիկայի Գիւտը», «Նոր Գալետոնիա» (տետր 5ից՝ 20ը) եւ գիտաակնարկային այլ պատմուածքներ։

Նշանաւոր մարդկանց կենսագրութիւններ շարքից հանդէսում տպագրուեցին Ջէյմս Ուատտի, Կոլումբոսի, Ռիչարդ Ագրոյթի, Ռոբերտ Ֆուլտոնի, Մոցարտի, Յովհաննէս Այվազովսկու եւ այլոց կեանքն ու գործունէութիւնը մեկնաբանող գեղարուեստական ակնարկներ։ Երեխաներին ընթերցանութեան հետաքրքիր նիւթ էր տալիս «Մանկութիւն Երեւելի Արանց» շարքը, որտեղ գեղարուեստական մանրապատումներով ներկայացւում էին հանրայայտ մարդկանց մանկութեան եւ պատանեկութեան տարիները։ Գեղարուեստական առումով այդ շարքից ուշագրաւ է «Փոքրիկ Աստղաբաշխն՝ Բիեռ Կասանդին», «Փոքրիկ Դատարկասունն-Ամիոյ» պատմակենսագրական պատումները։

Հանդէսի ծրագրային բաժիններից մէկը «Վարժութիւն Բարոյական»ն էր, որը երեխաներին օգտակար գիտելիքներ ու ծանօթութիւններ էր հաղորդում բնութեան երեւոյթների, երկրի, արեգակի, լուսնի, նաեւ մարդու բնաւորութեան դրական ու բացասական գծերի, մարդկային արատների ու առաքինութիւնների մասին։

Հանդէսի ուշադրութեան կենտրոնում երեխաների բարոյական դաստիարակութիւնն էր, որին մեծապէս նպաստում էր «Հօրեղբօր Մը Նամակները» շարքը (տետր 1ից՝ 13ը), որտեղ բարոյախօսական-բարոյախրատական զրոյցների միջոցով երեխաների մէջ դաստիարակւում են բնաւորութեան դրական գծեր՝ պարկեշտութիւն, արդարամտութիւն, ազնուութիւն, ճշմարտախօսութիւն, աշխատասիրութիւն, ընթերցասիրութիւն եւն.։ Յատկապէս կարեւորւում է օրինակի դերը երեխայի վարքագծի ձեւաւորման գործում։ Այդ մասին հօրեղբայրն իր սիրելի եղբօրորդուն գրում է. «Սիրելիս, մարդս բնութեամբ ուրիշներուն ըրածին կը հետեւի։ Օրինակը իրեն վրայ մեծ ազդեցութիւն կ'ընէ։ Բայց թէ՛ աղէկ եւ թէ՛ գէշ օրինակներ կան։ Բարեկիրթ տղան պէտք է որ երկուքէն ալ օգուտ քաղէ»[54]։

Հանդէսում ծանրակշիռ մաս են կազմում աստղագիտական, բնագիտական, աշխարհագրական եւ պատմագիտական նիւթերն ու ծանօթութիւնները, ինչպէս նաեւ՝ Հայաստանի աշխարհագրութեան եւ պատմական նշանաւոր վայրերի նկարագրութիւններն ու կարեւոր տեղեկութիւնները։ «Աստղագիտական Տեղեկութիւններ» բաժնում բարձր դասարանցիների համար տպագրուել է «Արեգակը» գիտահանրամատչելի յօդուածաշարը, որտեղ գիտելիքներ են հաղորդւում արեգակնային համակարգի կառուցուածքի մասին (տետր 21, 1882, էջ 337)։

Բուրաստան Մանկանցում կարեւոր նորամուծութիւն էր ֆիզիկական դաստիարակութեան հիմնահարցերին նուիրուած «Մարմնամարզութիւն» ծրագրային բաժինը, որտեղ տպագրւում էին լողի, ցատկի, վազքի, մարմնամարզութեան եւ սպորտի այլ ձեւերի վերաբերեալ յօդուածներ (տետր 7, 1882, էջ 111-113, տետր 12, էջ 187-188, տետր 13, էջ 208-209 եւ այլն), որոնք կարեւորում էին ֆիզիկական դաստիարակութեան դերը մատաղ սերնդի համակողմանի եւ ներդաշնակ դաստիարակութեան գործում։

Հանդէսի նորամուծութիւններից մէկն էլ «Ընտանեկան Դեղեր» բաժինն էր, որտեղ գետեղուած բարոյախօսական զրոյցների միջոցով երեխաների մէջ մշակւում էին առողջապահական կանոններից օգտուելու, մարմինը, միտքը եւ հոգին առողջ պահելու եւ զարգացնելու կարողութիւններ եւ հմտութիւններ։ Բուրաստան Մանկանցը երեխաներին հաղորդում էր՝ «...մարմինդ ու միտքդ առողջ պահելու միջոցներն բոլորովին գիտութեան մէջ մի փնտռեր, աշխարհիս երեք լաւագոյն բժիշկներ՝ Աշխատութիւն, Ժուժկալութիւն եւ Գոհունակութիւնն են»[55]։

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑ

Բուրաստան Մանկանցը հարուստ է նաեւ թարգմանական նիւթերով, որոնց մէջ առանձնակի տեղ են գրաւում եւրոպական եւ ռուսական առաջադէմ գրողներ՝ Ջարլզ Դիքենսի, Հենրի Լոնգֆելոյի, Կռիլովի, Ժան Լաֆոնտէնի, Հանս Քրիստիան Անդերսէնի, Հիւգոյի եւ այլոց ստեղծագործութիւնները։

Առաջադէմ մտաւորականները բարձր են գնահատել հանդէսի գործունէութիւնը։ Տեմիրճիպաշեանը գրում է. «Ջերմապէս կը յանձնարարենք բոլոր հայ ընտանեաց Բուրաստան մանկանց անուն պատկերազարդ շաբաթաթերթն, որ թէ նիւթոց ու թէ պատկերաց կողմէն օր ըստ օրէ կը կատարելագործուի՝ ջանիւք ու զոհողութեամբք իր անխոնջ եւ քաջարուեստ հիմնադիր-տնօրէն Պարոն Նշան Պէռպէռեանի»[56]։

Սակայն Բուրաստան Մանկանցը 1888ին կանգնեց փակման եզրին՝ համապատասխան թուով բաժանորդներ չունենալու պատճառով։

Իրրեւ Բուրաստան Մանկանցի շարունակութիւն Նշան Պէրպէրեանը 1889ին ձեռնամուխ եղաւ Ծաղիկ Մանկանց կիսամսեայ հանդէսի հրատարակմանը, որի արտօնատէրն էր Անտոն Սագայեանը (?-1927)։ 1891ին Միհրան Ասքանազի (1854-1904) խմբագրութեամբ հանդէսը լոյս տեսաւ իբրեւ դաստիարակութեան եւ կրթութեան հիմնահարցերին նուիրուած շաբաթաթերթ։ Այն 16 էջ ծաւալով լոյս էր տեսնում ամիսը

երկու անգամ։ Հանդէսին թղթակցում էին անուանի գրողներ ու հրապարակախօսներ՝ Մամուրեանը, Ռէթէոս Պէրպէրեանը (1850-1907), Միհրան Մոգեանը (1866-1922), Ջօպանեանը եւ ուրիշներ։

Հանդէսի ծրագրային յօդուածներից մէկում Մաղիկ Մանկանցի նպատակը սահմանուել է այսպէս՝ «Մեր հանդէսը իւր նոր շրջանին մէջ միեւնոյն նպատակին պիտի ծառայէ. պիտի պարունակէ մանկանց օգտակար յօդուածներ, շահաւէտ ծանօթութիւններ ամէն հետաքրքրական իրերու վրայ. գիտական եւ ուսումնական յօդուածներ, պատմութիւններ նոր գիւտերու վրայ, նշանաւոր անձանց կենսագրութիւններ»[67]։

Մաղիկ Մանկանցը վերը նշուած հանդէսների հետ համեմատած իր ձեւաբովանդակային կառուցուածքով, նիւթերի բովանդակային ընտրութեամբ ու շարադրման իրատեսական եղանակով եւ թարգմանական արուեստով աւելի կատարեալ էր եւ մէկ աստիճան բարձր նրանցից։ Հանդէսի նորոյթներից մէկն այն էր, որ նրանում տպագրւում էին կեանքի իրական պատկերը ներկայացնող մանրապատումներ, որտեղ յստակօրէն ուրուագծւում էին հասարակութեան տրոհուածութիւնը՝ հարուստների եւ աղքատների։ Հանդէսն ունէր եւս մէկ առաւելութիւն. այստեղ զետեղուած թարգմանութիւնները համապատասխանում էին բնագրերին, եւ, ի տարբերութիւն նախորդների, թարգմանչի կողմից այլ մեկնաբանութիւններ չէին ստանում։ Մաղիկ Մանկանցում նոյնպէս տպագրւում էին Լաֆոնտէնի, Լոնգֆելոյի, Կռիլովի առակներն ու բանաստեղծութիւնները, Ալֆոնս Դոդէի, Անդերսէնի, Դիկընզի, Ջորջ Բայրոնի, Վուչետիչի եւ այլոց պատմուածքներն ու հեքիաթները։

Մաղիկ Մանկանցը՝ Բուրաստան Մանկանցի անմիջական շարունակութիւնն էր՝ նոյն խմբագրութեամբ։ Այստեղ բոլոր ծրագրային բաժինները մասնակի փոփոխութիւններով պահպանուած էին։ Այսպէս՝ «Գիտական Զբօսանք» բաժնում տպագրւում էին գիտութեան տարբեր բնագաւառների վերաբերեալ գիտահանրամատչելի ակնարկներ։ Առանձին շարքով՝ «Մանկութիւն Երեւելի Արանց» խորագրի տակ, լոյս էին տեսնում հայ եւ այլազգի ժողովուրդների կեանքն ու պատմական անցած ուղին նկարագրող պատմատեսական յօդուածներ։

1891ին հանդէսի կարեւոր բաժիններից մէկը դարձաւ «Մանկավարժական Նամականի» շարքը, որը լոյս տեսաւ «Զանազանք» խորագրի տակ։ Այստեղ հետաքրքիր եւ աշխոյժ երկխօսութիւն էր ծաւալւում ոչ միայն պատանիների, այլեւ ծնողների եւ ուսուցիչների հետ, լուսաբանւում էին նաեւ պատմագիտական, հայագիտական, բարոյագիտական, հոգեբանական եւ մշակութային տեսական հարցեր։ «Գրական Վէպն ի

Ֆրանսիա» (թիւ 15, 1891, էջ 235-238) ծաւալուն յօդուածում ընդարձակ մեկնաբանութիւններով եւ քննադատական դիտողութիւններով հանդէս եկաւ անուանի հրապարակախօս Մամուրեանը, որը հանգամանօրէն լուսաբանեց ֆրանսիական նատուրալիստական վէպի գաղափարաբովանդակային միտումները եւ նրա թողած անառողջ ազդեցութիւնը յատկապէս պոլսահայ ընտանիքների բարոյահոգեբանական նկարագրի ձեւաւորման վրայ։ Մաղիկ Մանկանցում Մատթէոս Մամուրեանի սոյն յօդուածի լոյս ընծայումը բոլորովին պատահական չէր, եւ ունէր հեռահար նպատակներ. այն է՝ ֆրանսիական կենցաղագրական վիպագրութեան փոխարէն մանկական գրականութիւնը կառուցել իրապաշտական գրականութեան ամուր հիմքերի վրայ։

Հանդէսի հրապարակման առիթով Յակոբ Ոսկանը (1824-1907) մի քանի լուրջ դիտողութիւններով եւ առաջարկութիւններով հանդէս եկաւ Յովնան Փալագաշեանի (1860-1950) Մաղիկ շաբաթաթերթում։ Յակոբ Ոսկանը պահանջում էր որոշակիութիւն եւ յստակութիւն մտցնել գրեթէ նոյն խորագիրը կրող հանդէսների ձեւաբովանդակային կառուցուածքներում։ Նրա կարծիքով նպատակայարմար էր, որ Մաղիկ Մանկանցը, ուսումնադաստիարակչական նիւթերի գերակշռութեան պատճառով, հրատարակուէր Մաղկունք խորագրով։ Մաղիկ Մանկանցը ընթերցողին ներկայանում էր իբրեւ կրթութեան եռաստիճան համակարգ՝ տարրական, միջին եւ բարձրագոյն դասընթացներով։ Իր տեսակի մէջ այս հանդէսը եզակի էր։ Դիմելով երկու Մաղիկներին՝ Ոսկանն առաջարկում է համագործակցութեան մի ծրագիր, ըստ որի Փալագաշեանի հանդէսը կը ստանձնէր միջին եւ աւագ տարիքի երեխաների, իսկ Մաղիկ Մանկանցը կրտսեր տարիքի երեխաների դաստիարակութեան ու կրթութեան գործը։

Անուանի հրապարակախօսը հետամուտ լինելով քաղաքակիրթ ժողովուրդների առաջադէմ փորձին, բարձրացնում էր տարբեր տարիքի երեխաների համար մանկական յատուկ հանդէսներ ստեղծելու գաղափարը։ Իր խօսքն ուղղելով Մաղիկ Մանկանցին՝ նա գրում է. «Օ՛ն ուրեմն, գործդ փոքրիկ ստահակներու եւ սիրունիկ փոքրիկ օրիորդներու հետ է, ամէնն ալ 5-9-ը տարեկան... մինչեւ 10-էն 15 տարու եղողներ միջին կարգի կը վերաբերին, դու անոնց հետ գործ չունիս, միայն փոքրագոյններուն համար քիչ մ'աւելի պիտի յոգնիս, զի առտնին դաստիարակութեան թերին ալ առ մեզ մանկավարժք պարտին ընուլ, բայց ի՞նչ ընենք։ Փոքրիկ մանկանց դաստիարակէ ալ կը պահանջուի հարկաւ գիտութիւն, բայց աւելի բան մ'ալ, այն է անչափ երկայնամտութիւն...»[58]։

Հանդէսի բուն նպատակն էր՝ օժանդակել ընտանեկան դաստիարակութեանը, նպաստել բարեկարգ ծրագրերի ու համապատասխան դասագրքերի ստեղծման գործին, քանի որ ազգային դաստիարակութեան թերութիւններից գլխաւորը թերեւս որակեալ ուսուցչական կազմի բացակայութիւնը եւ կրթական ծրագրերի ու պիտանի դասագրքերի պակասն էր։ Կարեւորելով տարրական դասարանների ուսուցչի մասնագիտութիւնը՝ Ոսկանը գրում է. «Եթէ աշակերտներդ փոքրագոյնքն են, պաշտօնդ մեծագոյնն է իբրեւ դաստիարակ։ Եթէ սերմանողը լաւ չը սերմանէ, հնձողը չունենար երբեք լաւ հունձք, կրթութեան արտին դու ես սերմանող մշակ, պաշտօնիդ կարեւորութեան զգացում ունեցիր, որպէսզի լաւ կատարես զանի, եւ պատուով կատարես»[59]։ Ինչ վերաբերում է դասագրքերին, ապա այս հարցում առաջին հերթին պէտք է հաշուի առնել կրտսեր դպրոցականի տարիքային առանձնայատկութիւնները, նրանց նախասիրութիւններն ու հետաքրքրութիւնները

Այսպիսով՝ հանդէսի կարեւոր բաժիններից մէկը «Դպրոցական Դասընթաց» խորագիրը կրող բաժինն էր, որտեղ տպագրւում էին այնպիսի նիւթեր, որոնք կրտսեր դպրոցականին ծանօթացնում էին իր շրջապատի իրերին, երեւոյթներին եւ դրանց առանձնայատկութիւններին, հանրամատչելի գիտելիքներ հաղորդում գիւղերի ու քաղաքների, լեռների ու սարահարթերի աշխարհագրական դիրքի, երկրի բնակլիմայական պայմանների, կենդանական ու բուսական աշխարհի մասին։ «Միջին Դասընթացք» խորագիրը կրող բաժնում հիմնականում տպագրւում էին հայերէնագիտութեան ժամանակակից հիմնահարցերի վերաբերեալ նիւթեր, բերւում քերականական կանոնների դիւրուսոյց օրինակներ ու դիդակտիկ նիւթեր, գործնական պարապմունքների համար մշակուած յատուկ բնագրեր, օտար լեզուների՝ գլխաւորապէս ֆրանսերէնի ուսուցման համար բացատրական յօդուածներ, ինչպէս նաեւ եւրոպական առաջադէմ գրողների ստեղծագործութիւններից ընտիր հատուածներ ու բանաստեղծութիւններ։ Հանդէսի կրթական բաժիններից վերջինը «Բարձրագոյն Ընթացքն» էր, որտեղ տպագրւում էին պատմագիտական, հայրենագիտական նիւթեր աւագ դպրոցականների համար։ Դրանց շարքում յատկապէս ուշագրաւ էր հայ վիպասանութեանը եւ հայ պատմիչների կեանքին ու գործին նուիրուած՝ Մատթէոս Գարագաշեանի (1818-1909) ընդարձակ մեկնութիւններով ու ծանօթագրութիւններով վարքաբանական յօդուածները։

Անդրադառնալով հանդէսի եռաստիճան կրթական համակարգին՝ Ոսկանը յանգում է այն ճիշտ մտքին, որ կրթութեան հիմքը նախակրթութիւնն է, եւ եթէ ազգն ունի բարեկարգ նախակրթարան-

ներ, ապա դա ամուր հիմք կը դառնայ նաեւ բարեկարգ եւ օրինակելի միջնակարգ դպրոցների ստեղծման համար։ Բարձրացնելով դպրոցի, դաստիարակութեան մէջ նրա ունեցած դերի, եւ ուսուցման տեսութեան մի շարք հրատապ հարցեր, այնուամենայնիւ, Ոսկանը քաջ գիտակցում էր, որ ազգային դաստիարակութեան թերութիւնները միայն դպրոցներով չեն պայմանաւորուած։ Ազգային դաստիարակութեան թերութիւնների բացայայտման համար իբրեւ կարեւոր գործօն անհրաժեշտ է հաշուի առնել նաեւ արեւմտահայութեան սոցիալ-տնտեսական եւ ազգային-քաղաքական վիճակը։ Առաջնորդուելով «Չկայ առաջադիմութիւն առանց աշխատութեան» կարգախօսով՝ նա պահանջում էր գործնական կապ ստեղծել ուսուցման եւ աշխատանքային դաստիարակութեան միջեւ։ Վաղ տարիքից երեխաների մէջ դաստիարակել սէր՝ աշխատանքի եւ աշխատաւոր մարդու նկատմամբ, իսկ այդ ուղղութեամբ մեծ անելիքներ ունեն նաեւ մամուլն ու մանկական հանդէսները, այդ թւում նաեւ՝ Մագիկ Մանկանցը։

ՏԱՃԱՐ ՄԱՆԿԱՆՑ

Մանկապատանեկան մամուլն առաջընթաց զարգացում ապրեց նաեւ Ի. դարի սկզբին։ Այսպէս՝ Զարմայր քահանայ Կեզիւրեանի (1865-1955) խմբագրութեամբ 1913ին Պոլսում հրատարակուեց Տաճար Մանկանց պատկերազարդ ամսագիրը, որի արտօնատէրը Հմայեակ քահանայ Էքսերճեանն (1861-1941) էր։ Հանդէսը հրատարակւում էր 16 էջ ծաւալով։

Տաճար Մանկանցը նոյնպէս ունեցել է գործունէութեան կարճատեւ շրջան (1913-1915), սակայն իր որոշակի աւանդն ունի մանկապատանեկան մամուլի զարգացման գործում։ Հանդէսին թղթակցում էին անուանի մանկագիր-հրապարակախօսներ Գէորգ Մեսրոպը (1881-1948), Տիգրան Չիթունին (1861-1960), Ա. Սերունին (Արշակ Թիւթիւնճեան, 1878-1915), Ա. Զուգասզեանը, Արշակ Թիւթիւնճեանը, Ալփասլանը, Հմայեակ Պախթիարեանը (1877-1960), Արաքս Հեուլեանը եւ ուրիշներ։

Ամսագիրն ունէր կրօնաբարոյական ուղղութիւն. նրա նպատակը քրիստոնէական բարոյախօսական ընտրանի գրոյցների միջոցով երեխաներին կրօնական գիտելիքներ հաղորդելը եւ կրօնաբարոյական դաստիարակութիւնն էր։ Այդ նպատակը յաջողութեամբ իրագործում էր «Յիսուսի Կեանքէն» խորագիրը կրող բաժինը, որտեղ տպագրւում էին մէկը միւսից հետաքրքիր եւ ուսանելի գրոյցներ եւ աւետարանչական պատմուածքներ («Յիսուս-մանուկը եւ Հովիւները», «Յիսուս-մա-

նուկը Տաճարին Մէջ», «Տէրունական Ընթրիքը», «Սերմնացանին Առակը», «Արեւելքի Մոգերը», «Յիսուս Եւ Կծծի Ջաղացպանը» եւն.)։[60]

Հանդէսի խմբագրականներում տպագրւում էին գիտահանրամատչելի ակնարկներ ու պատմուածքներ, որոնք ընթերցանութեան հրաշալի նիւթեր լինելուց զատ՝ նպաստում էին նաեւ երեխաների մտածողութեան, դատողութեան, ճանաչողական ուժերի, ստեղծագործական երեւակայութեան, լիշողութեան զարգացմանը։ Այդ շարքում իրենց ձեւաբովանդակային կառուցուածքով եւ գեղարուեստական արտայայտչական դրսեւորումներով առանձնանում էին «Երկնքի Փառքը. Քիչ Մը Աստեղագիտութիւն», «Պատերազմը Եւ Իր Անուղղակի Հետեւանքները», «Մաղիկներուն Մէջ», «Փոքրիկ Առնէտի Մը Պատմութիւնը», «Թռչուններու Վերադարձը», «Ո՞ւրկէ Առաջ Կու գայ Շոգիի Ոյժը», «Ձիւնը», «Երկու Մուկերու Տխուր Պատմութիւնը» եւ այլ պատմուածքներ (թիւ 8, 9, 10, 11, 1914)։

Տաճար Մանկանցում գերակշիռ տեղ է յատկացուած հին Յունաստանի դիցաբանական պատմութիւններին, աւանդապատումներին ու հեքիաթներին, որովհետեւ դրանցում ցայտուն գոյներով ներկայացւում է չարի ու բարու, գեղեցիկի ու տգեղի համադրութիւնը («Մեծ Արջ Եւ Պզտիկ Արջ Համաստեղութիւնը», «Թագաւորն Ու Գեղացին», «Բարի Տէրն Ու Չար Ծառան» եւն.)։

Մոգեանի, Տ. Եաղուպեանի, Հ. Մարգարեանի եւ այլոց թարգմանութեամբ տպագրուել են «Հրաշալի Կոճղը», «Ոսկեղէն Պատուհանները», «Երկու Ձիերը», «Սեւ Յորենը» եւ այլ պատմուածքներ, որոնք բուսական ու կենդանական աշխարհի մասին անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելուց բացի՝ երեխաների մէջ դաստիարակում էին բարոյական դրական յատկութիւններ՝ աշխատասիրութիւն, գթասրտութիւն, ճշմարտախօսութիւն, մաքրասիրութիւն, ազնուութիւն եւն.։

Հանդէսի էջերում առանձնապէս աչքի են ընկնում Անդերսէնի, Լեւ Տոլստոյի եւ ուրիշների հեքիաթներն ու ժողովրդական բանահիւսութեան այլ նիւթերը («Ոլոռնի Մաղիկը», «Լուցկի Վաճառող Աղջիկը», «Բարի Տէրն Ու Չար Ծառան», «Դեղձերը» եւն.)։ Կենդանիների մասին գիտահանրամատչելի պատմուածքները տպագրուել են «Մեր Բարեկամ Կենդանիները» խորագրի տակ։

Հանդէսի կարեւոր նորամուծութիւններից մէկը «Մանկական Թատերախաղ» բաժինն էր, որտեղ տպագրւում էին Լաֆոնտէնի «Ճպուռն Ու Մրջիւնը» (թարգմանութիւնը եւ բեմականացումը Մենտորի), «Շիք Աղջիկը» (մենախօսութիւն, բեմականացումը՝ Նարդուհի Ճեզուէճեանի) եւ այլ գործեր։

Երեխաների գեղագիտական դաստիարակութիւնը հանդէսի առաջնահերթ խնդիրներից մէկն էր։ Այդ նպատակով «Ձայնագրուած Երգեր» խորագրի տակ, որը նոյնպէս նորոյթ էր, նոտագրուել են Ռուբէն Որբերեանի (1874-1931), Ասատուրի, Ալիխասլանի, Հեռլեանի, Անմահունու (1864-1924) եւ այլոց երգերը («Համբերութիւն», «Ուղերձ Ամանորի», «Ցարատեւ», «Օրօրոցը», «Տղոց Երգը» եւն.)։

Հանդէսը հարուստ է նաեւ նշանաւոր մարդկանց կեանքն ու գործը պատկերող պատմակենսագրական մանրապատումներով։ Այսպէս՝ «Գիծեր Մեծ Մարդոց Կեանքէն» խորագրի տակ տպագրուել են «Շարլ Կառնիէի Մանկութիւնը», «Պզտիկ Արուեստագէտ Մը», «Բարմանթիէ, Մարդկութեան Բարերար Մը» եւ այլ գործեր։

Գեղարուեստական ընթերցանութեան հարուստ եւ ուսանելի նիւթեր են նաեւ առակները եւ նրանցից բխող բարոյախօսական խրատները։ Այսպէս, «Առակներ» խորագրի տակ տպագրուել են հայ, եւրոպացի եւ ռուս առակագիրների ընտրանի հաւաքածուները («Իժն Ու Ժիժին - Աղուէսն Ու Աքլորը», «Խխունջն Ու Հողմաղացին Թեւը», «Խխունջն Ու Ճնճղուկը», «Ձին Եւ Եղջերուն», «Գայլն Ու Արագիլը» եւն.)։

Նիւթի մատուցման ձեւով ուշագրաւ է «Ձանազանք» խորագիրը կրող բաժինը, որը առանձնապէս հետաքրքրական ու գուարճալի է այլազան հանելուկ-շուտասելուկներով, առած-ասացուածքներով, մտքի գրօսանքներով ու թուաբանական հետաքրքրաշարժ խնդիրներով, իբրեւ տնային աշխատանքներ յանձնարարելիք առաջադրանքներով ու հարցարաններով, որոնք երեխաների արագ եւ ինքնուրոյն մտածելու կարողութիւնը եւ տրամաբանական մտածողութիւնը զարգացնելուց բացի՝ նրանց մէջ դաստիարակում են ինքնագիտակցութիւն, երբ երեխան ոչ միայն ճանաչում է ինքն իրեն, գիտակցում իր իրաւունքներն ու պարտականութիւնները, ինքնագնահատում իր արժանիքներն ու զգացմունքները, այլեւ մղւում ինքնագործունէութեան, որը բարեկիրթ եւ արժանավայել ապրելու կարեւոր նախապայմաններից մէկն է։ Այս խորագրի տակ տպագրուել են նաեւ մանկավարժական բնոյթի յօդուածներ, որոնք հետաքրքիր եւ ուշագրաւ տեղեկութիւններ են հաղորդում եւրոպական դպրոցի փորձից («Շուէտական Վարժարաններու Մէջ»)։ Մանրակրկիտ ներկայացուել է անգլիական, գերմանական, ֆրանսիական, ամերիկեան դպրոցն ու դաստիարակութեան համակարգը («Անգլիացի Դպրոցականի Տասը Պատուէրները», «Ամերիկացի Տղոց Երդումը» եւն.)։ Այսպէս, օրինակ, «Ամերիկացի Տղոց Երդումը» փոքրածաւալ ակնարկում մատնանշւում է, թէ ինչպէս իւրաքանչիւր նոր

ուսումնական տարում աշակերտներն իրենց ուսուցչին տալիս են հետեւեալ երդումը.-

«Կ'ԵՐԴՆՈՒՄ

Չվնասել ո՛չ ծառերուն եւ ոչ ծաղիկներուն:

Պաշտպանել թռչունները.

Յարգել ուրիշին ստացուածքը, որպէս զի ուրիշն ալ իմս յարգէ.

Միշտ բարեկիրթ խօսուածք մը ունենալ.

Չթքնել ո՛չ թրամուէյին, ո՛չ դասարանին մէջ եւ ո՛չ ալ փողոցը.

Թուղթ եւն. չնետել հանրային պարտէզներու կամ զբօսավայրերու մէջ»[61]:

Այդպիսի կարեւոր պահանջներ եւ գեղեցիկ սովորոյթներ Տաճար Մանկանցը ձգտում էր վաղ տարիքից դաստիարակել նաեւ հայ մանուկների մէջ: Սոյն խորագրի տակ պարբերաբար տպագրուել են նաեւ Զիթունու «Մանուկներուն Դիցաբանութիւնը», Զուգասզեանի «Գաւառի Կաղանդը», Մոգեանի թարգմանութեամբ «Սեւ Ցորենը», Արրճեանի «Ուսուցչի Մը Խօսքերը» եւ այլ պատմուածքներ ու քերթուածներ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այսպիսով, ԺԹ. դարի երկրորդ կէսին եւ Ի. դարի սկզբին Արեւմտահայ իրականութեան մէջ լոյս տեսած պարբերականները, օրաթերթերն ու մանկական հանդէսներն արձագանգելով ժամանակի լուսաւորական ու կրթութեան շարժման առաջադրած խնդիրներին եւ դաստիարակութեան ու կրթութեան հիմնահարցերը լուսաբանելով մանկավարժութեան նորագոյն ուղղութիւնների հիմնադրոյթներով, կարեւոր դեր են կատարել մատաղ սերնդի դաստիարակութեան, նրա աշխարհայեացքի ձեւաւորման եւ աշխարհճանաչողութիւնն ընդլայնելու ուղղութեամբ:

Պարբերական մամուլի խմբագրականներում եւ ծրագրային յօդուածներում առանձնայատուկ տեղ են յատկացուել լուսաւորութեան, դպրոցի եւ կրթութեան հարցերի ըստ ամենայնի լուսաբանմանը, որը բարձր պատասխանատուութեամբ ստանձնել են հայ առաջադէմ գրողները, ազգային գործիչներն ու հրապարակախօսական միտքը:

Ցաղթահարելով բազմաթիւ դժուարութիւններ եւ անլուծելի խնդիրներ, այնուամենայնիւ, արեւմտահայ տպարանների կազմակերպման եւ լրագրութեան զարգացման գործը ԺԹ. դարի երկրորդ կէսին եւ Ի. դարի առաջին երկու տասնամեակներին անցել է զարգացման որոշակի փուլերով՝ տարէցտարի ընդլայնելով իր գործունէու-

թեան շրջանակները՝ հիմնել տարեգրեր եւ ամսագրեր, օրաթերթեր եւ մասնագիտական հանդէսներ ոչ միայն Պոլսում եւ Զմիւռնիայում, այլեւ արեւմտահայ գաւառներում եւ Օսմանեան կայսրութեան հայաշատ կենտրոններում։

Մամուլի զարգացման աստեղային շրջանը՝ պայմանաւորուած Արեւմտահայաստանի ազգային-քաղաքական իրադարձութիւններով, ԺԹ. դարի 70ականներն էին, երբ մէկը միւսի յետեւից լոյս ընծայուեցին անհամար քանակութեամբ մամուլի նոր, աւելի կատարեալ տեսակներ. դրանց շարքում նշանակալից էին Արարատը, Արեւելեան Մամուլը, Մշակը, Հոյսը, Արձագանքը, Բիւրակնը, Հանդէս Ամսօրեան, Հնչակը, Մուրճը, օրաթերթերից՝ Մասիսը, Նոր Դարը, Հայրենիքը, Արեւելքը, Բիւզանդիոնը եւն.։

Թէ՛ արեւելահայ, թէ՛ արեւմտահայ կեանքում առաջընթաց զարգացում էր ապրում նաեւ մասնագիտական՝ այդ թւում մանկավարժական մամուլը, որի աւետաբերը դարձաւ Ստեփանէի Հայկական Աշխարհը, այնուհետեւ՝ Երկրագունդը, Աւետաբեր Մանկանցը, Բաստամեանցի Դպրոցը, Պարոնեանի Թատրոն Բարեկամ Մանկանցը, Նիկողայոս Խոսրովեանի Վարժարանը, Տիգրան Նագարեանի (1858-1926) Աղբիւրը, Նշ. Պէրպէրեանի Բուրաստան Եւ Մաղիկ Մանկանցը, Կեզիւրեանի Տաճար Մանկանցը եւ մանկական այլ հանդէսներ։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Հայաստանի Ազգային Արխիւ, ՊՖ 312, թ. 57, վաւ. 3, 4, 7։

[2] Արեւելեան Մամուլ, Զմիւռնիա, Մայիս, 1873։

[3] Նոյն, Դեկտեմբեր, 1875։

[4] Նոյն, Փետրուար 1876։

[5] Նոյն, Սեպտեմբեր, Հոկտեմբեր, 1874։

[6] Հանդէսի ազգային բաժնում տպագրւում էին Մամուրեանի ընդարձակ տեսութիւնները՝ նուիրուած Արեւմտեան Հայաստանին, հայ գաղթօջախների տնտեսական ու քաղաքական իրավիճակին, «Հայկական հարցի»ին եւ դրա շուրջ ծաւալուած դիւանագիտական պայքարին, Արեւմտեան Հայաստանի բարենորոգումների խնդրին եւն.։

[7] Մաշտոցի Անուան Մատենադարան, Արշակ Ալպոյաճեանի Ֆոնդ, թղթ. 15, վաւ. 33-1-2, 878 թերթ, «Տպագրութեան Արուեստը Եւ Հայք» (ձեռագիր)։

[8] Մէջբերուած հատուածների ուղղագրութիւնն ու կէտադրութիւնը թողնում ենք անփոփոխ։

[9] Գարեգին Զարբհանալեան, Պատմութիւն Հայերէն Դպրութեան Ի Պէտս Ուսման Ազգային Վարժարանաց, Վենետիկ, 1878, էջ 504։

[10] Եղիա Տեմիրճիպաշեան, Փիլիսոփայական Բառարան Ժողովրդական, Կ. Պոլիս, 1879, էջ 32։

[11] *Արեւելքում առանձին բաժին է յատկացուել Ռուսաստանին, նրա վարած ներքին եւ արտաքին քաղաքականութեանը, համաշխարհային քաղաքականութեան ասպարէզում նրա խաղացած դերին, ռուսական մշակոյթին, մամուլին եւ գրականութեանը։ Դրանց մեծ մասը խմբագրական յօդուածներ են, որոնք գրուել են Արփիարեանի եւ Քեչեանի կողմից։ Ռուսաստանի նկատմամբ ցուցաբերուած Արեւելքի հետաքրքրութիւնը ունէր իր պատճառները։ Հայ ժողովրդի արեւելեան հատուածը ապրում էր այդ կայսրութեան տարածքում, հետեւապէս, նրա վարած քաղաքականութիւնը ամէն դէպքում ազդում էր հարազատ ժողովրդի այդ հատուածի շահերին։*

[12] *Հրանտ Ասատուր, «Հրապարակագրին էջերէն» (ձեռագիր), ԳԱԹ, Թորոս Ազատեանի ֆոնդ, թիւ 139։*

[13] *Իմմա Կոստանդեան, Կոստանդնուպոլսի «Արեւելք» Օրաթերթը, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, Երեւան, 2003, էջ 46-53։*

[14] *Արեւելք*, 1885, թիւ 342, 346, 358։

[15] *Նոյն*, 1900, թիւ 4398, 4399, 4401, 4402, 4403։

[16] *Նոյն*, թիւ 4։

[17] *Նոյն*, 1885, թիւ 387։

[18] *Նոյն*, 1883 թիւ 158, 159; 1884 թիւ 160, 161։

[19] *Գրական Եւ Իմաստասիրական Շարժում*, Պոլիս, 1884, տետր 5, էջ 100։

[20] *Արեւելք*, 1885, թիւ 4087։

[21] *Հայաստանի Ազգային Արխիւ*, ՊՖ. 312, թ. 57, վաւ. 3, 4, 7։

[22] *Կարապետ Շահնազարեանի կտակի համաձայն Կիլիկիայում պէտք է բացուէր ազգային դպրոց, սակայն Ներսէս Վարժապետեանը նպատակայարմար գտաւ դպրոց հիմնել Պոլսում. նա խնդրեց եգիպտահայ մեծահարուստ Նուպար փաշայի միջնորդութիւնը, որպէսզի Շահնազարեանի կտակած 1000 ոսկին տրամադրուի Պոլսի Խասգիւղ թաղում դպրոց բացելու նպատակին։ 1866ին Խասգիւղում հիմնադրուեց Նուպար-Շահնազարեան դպրոցը։*

[23] *Շարաթաթերթը երկու տարի գործելուց* (1870-1871) *յետոյ փակուեց։ Պարոնեանի խմբագրութեամբ այն վերստին հրատարակուեց* 1883*ին* եւ 1884-1888*ին։ Երկրագունդը խմբագրել է նաեւ Տեմիրճիպաշեանը։*

[24] *Երկրագունդ, Պոլիս*, 1870, *թիւ* 15, *էջ* 238։

[25] *Նոյն տեղում։*

[26] *Նոյն*, *թիւ* 2, *էջ* 17։

[27] *Նոյն*, *թիւ* 20, *էջ* 323։

[28] *Նոյն*, *թիւ* 11, *էջ* 161-163, *թիւ* 18, *էջ* 113-114։

[29] *Նոյն*, *թիւ* 6, *էջ* 84։

[30] *Երկրագունդ*, *թիւ* 52, 1870, *էջ* 571-590։

[31] *Նոյն*, *թիւ* 52, *էջ* 572։

[32] *Նոյն*, *թիւ* 30, *էջ* 466-475։

[33] *Սիոն*, 1866 *Նոյեմբեր*, *Ա. տարի*, *թիւ Ա.-Բ.*, *էջ* 164։ *Ընդօրինակող Յ. Ս. Քիւրքճեանով*, *Հալէպ* 1 *Նոյեմբեր* 1866։

[34] *Նոյն*, *թիւ* 50, *էջ* 50, 51, 52 *եւն.*։

[35] *Աւետարեր Տղայոց Համար*, *Պոլիս*, *թիւ* 6, 1895։

[36] *Գառնիկ Ստեփանեան*, *Յակոբ Պարոնեան. Կեանքը Եւ Հրապարակախօսութիւնը*, *Երեւան*, 1964, *էջ* 173։

[37] *Բուրաստան*, Գ. պրակ, Հալէպ, 1952., էջ 59։
[38] *Աւետարեր Տղայոց Համար*, թիւ 1, 1914։
[39] *Բուրաստան Մանկանց*, Պոլիս, տետր 1, 1882, էջ 1։
[40] Նոյն, էջ 2։
[41] Պարոնեանը Հոյսը խմբագրել է 1879 Սեպտեմբերից մինչեւ 1880 Ապրիլը։
[42] *Թատրոն Բարեկամ Մանկանց*, Պոլիս, թիւ 1, 1876, էջ 8։
[43] Նոյն։
[44] Նոյն, էջ 2։
[45] Նոյն, էջ 3։
[46] Նոյն, էջ 2։
[47] Նոյն։
[48] Նոյն, էջ 3։
[49] Նոյն, թիւ 2, 1876, էջ 12։
[50] *Բուրաստան Մանկանց*, տետր 3, 1884, էջ 48։
[51] Նոյն, էջ 48։
[52] Նոյն։
[53] Նոյն, տետր 15, 1882, էջ 231։
[54] Նոյն, տետր 13, 1882, էջ 202։
[55] Նոյն, տետր 1, 1882, էջ 11։
[56] *Գրական Եւ Իմաստասիրական Շարժում*, տետր 2, 1883, էջ 120։
[57] *Մաղիկ Մանկանց*, Պոլիս, թիւ 23, 1890, էջ 359-360։
[58] *Մաղիկ*, թիւ 20, 1891, էջ 1։
[59] Նոյն։
[60] *Տաճար Մանկանց*, Պոլիս, թիւ 9, 10, 11, 1913։
[61] Նոյն, թիւ 10, 11, 12, 1914, էջ 140։

THE WESTERN ARMENIAN PRESS AND ITS ROLE IN THE DEVELOPMENT OF THE ENLIGHTENED SCHOOL
(Summary)

SHOGHIK VOSKANIAN

The development of periodicals which were an integral part of Armenian history and culture was the product of historical development and the national revival of Armenian public life in the 19th century.

Indeed, the 1870s marked the turning point in this regard. In line with national revival, a number of newspapers were published (like *Byuzandion, Haykakan Ashkharh, Mshak, Pordz, Ardzagank, Arevelyan Mamul,* etc.) that discussed issues of enlightenment, development, growth and the upbringing of the young generation and directed the attention of the communal authorities to the importance of schooling in building the nation among both the Eastern and Western Armenians. These newspapers portrayed the existing public-political life of the period.

Against the backdrop of this public life, the author highlights the contribution Western Armenian children's newspapers had on child rearing. Voskanian brings to the spotlight a number of Western Armenian children's biweeklies and magazines, like *Arevelk, Arevelyan Mamul, Avetaber Mankants, Burastan Tsaghik Mankants, Tatchar Mankants, Tatron Barekam Mankants,* and *Yerkragund.*

In a comprehensive manner, these papers raised the concerns of Armenian schools. Articles, elaborations and discussion on issues having to do with the curriculum and syllabus, school buildings, and teaching methods were commonplace. Besides, pedagogical tenets and psychological aspects were raised and properly discussed, and they called upon the communal authorities to pay proper attention to such educational concerns. Furthermore, through translations, these children's magazines promoted reading habits and literary taste, and broadened the perspective and world perception of children. Through various literary and theoretical translations the young readers shared the experiences of other nations in education, their value systems and world perceptions.

The author notes that this enlightening effort was conducted by a large number of renowned Armenian writers, public figures and clerics.